

ԸՍՏ «ՊԼՈՒՄՊԵՐԿ»-Ի

ԹՈՒՐԲԻԱՆ ՊՐԻՔՍ-ԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԳԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԱԾ Է



Թուրքիոյ իշխանութիւնները ՊՐԻՔՍ-ին միանալու դիմում ներկայացուցած են: Այս մասին կը հաղորդէ «Պլումպըրկ»-ը՝ վկայակոչելով իր աղբիւրները: Լրատուամիջոցին տեղեկութիւններով՝ Անգարան կազմակերպութեան անդամակցելու դիմումը ներկայացուցած է ամիսներ առաջ:

Շար.ը՝ էջ 2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԷԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՓՈԹԹԻՆԻ ԱՅՍՕՐՈՒՄՆ ԱՅՑԵԼՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋ ՄՈՆԿՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՉԷ ԳԻՄԱԾ



Այն տեղեկութիւնները, թէ Միջազգային քրեական դատարանը Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի այցելութեան նախաշեմին դիմած է Մոսկոյիոյ նախագահ Ուխսանկին Խուրելտուխին, իրականութեան չեն համապատասխաներ: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յատուկ մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարած է Մոսկոյիոյ նախագահի մամուլի ծառայութեան ղեկավար Ուլզիպայարին Չուպայարը:

Շար.ը՝ էջ 2

ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ Է



Կիրակի օր Ազրպէյճանի մէջ տեղի ունեցած արտակարգ խորհրդարանական ընտրութիւններուն յառաջատար է Իլիամ Ալիեւի «Նոր Ազրպէյճան» կուսակցութիւնը: Անկկա պիտի ստանայ խորհրդարանի 125 աթոռներէն 68-ը: «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Ընտրական կեդրոնական յանձնախումբի նախագահ Մազահիր Փանախով՝ հիմնուելով ընտրական տեղամասերու 91 առ հարիւրի ջուրներու հաշուարկման արդիւնքներուն վրայ:

Քուէարկութեան մասնակցութեան համեմատութիւնը եղած է 37,27 առ հարիւր՝ արձանագրուած 6,4 միլիոնէն ջուէարկած է 2,1 միլիոն ջուէարկող:

Մնացեալ աթոռները, ինչպէս ազրպէյճանական «Թուրան»-ը կը գրէ, պիտի տրամադրուին այսպէս կոչուած «անկայի» թեկնածուներուն, որոնք ծանօթ են իրենց իշխանամետ դիրքորոշումով:

Շար.ը՝ էջ 2

ՄԻՆՉ ԻՍՐԱՅԷԼ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՅԻՆ ՇՈՒՐՋ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ, ՀԱՄԱՍ ՊԱՏՐԱՍՏ Է ԳՈՐԾԱՐՔ ԿՆՔԵԼՈՒ



Իսրայէլեան պատկերասփիւռի 12-րդ կայանը հաղորդեց, որ ՄԱԿ-ի ժօտ Իսրայէլի դեսպան Կիւատ Էրտան ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդէն պահանջած է Կազախի մէջ գերիներու կացութեան քննարկման համար արտակարգ նիստ մը գումարել:

Շար.ը՝ էջ 8

ՀԱՃԻԵՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐՈՒՆ ՆԿԱՏԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՊԷՏՔ Է ԿԻՐԱՐԿՈՒՄԻՆ»

Ազրպէյճանի նախագահի օգնական Յիքմէթ Յաճիւ Յայաստանը «բռնագրաւող երկիր» կոչած է՝ Նշելով, որ «Յայաստանի զինեալ ուժերուն նկատմամբ սահմանափակ կոչումներ պետք է կիրարկուին»: Այս մասին կը հաղորդէ «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանը:



«Եթէ ուշադրութիւն դարձնենք Յամաշխարհային Բ. պատերազմէն ետք միջազգային յարաբերութիւններու համակարգին, ապա պիտի տեսնենք, որ կան շատ փոքր թիւով պետութիւններ, որոնք բռնագրաւողներ ու նախապրծակներ են, որոնց շարքին է նաեւ Յայաստանը», ըսած է Ազրպէյճանի նախագահի օգնականը:

Շար.ը՝ էջ 8

ՊԱՅՐԱՄՈՎ. «ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷ, ՊԷՏՔ Է ԼՈՒՐՋ ՔԱՅԼԵՐՈՒ ՉԵՌՆԱՐԿԷ»



Ազրպէյճան Յայաստանին պիտի ներկայացնէ խաղաղութեան համաձայնագիրի վերաբերեալ առաջարկներու տարբերակներ: Այս մասին Պաքով մէջ Սերպիոյ արտաքին գործոց նախարար Մարքօ Զուրիչի հետ միացեալ մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարած է Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյիոն Պայրամով:

Ան նաեւ ակնարկած է, որ Ազրպէյճանի Սահմանադրութիւնը տարածքային պահանջներ չի պարունակեր դրացի ոչ մէկ պետութեան նկատմամբ, ներառեալ Յայաստանը: «Յայաստանի սահմանադրութեան եւ շարք մը այլ արժեքափային հռչակագիրներու մէջ մինչեւ օրս կը մնան Ազրպէյճանի նկատմամբ տարածքային պահանջներ», ըսած է ան:

Շար.ը՝ էջ 8

ԱՐԱՔԻՒ «ԻՍՐԱՅԷԼ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ ՑԵՂԱՍՊԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՊՆԴԵԼՈՎ ՇՐՋԱՆԸ ՎՏԱՆԳԱՌՈՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԵԶՐԻՆ ԿԸ ՄՂԷ»

Իրանի արտաքին գործոց նախարար Ապպաս Արաքժի յայտնեց. «Իսրայէլ Կազախի մէջ ցեղասպանութեան եւ Այսրորդանանի մէջ սպանութեան մեքենայի վրայ պնդելով շրջանը վտանգաւոր ճգնաժամի եզրին կը մղէ»:

«Եթէ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահուի արեւմուտքի դաշնակիցները անոր ոճրային սադրանքները դադրեցնելու ձախողին, անոնց հետեւանքներուն պատասխանատուութիւնը պիտի կրեն», Նշեց Արաքժի:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 33-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ «ՎԵՐԱԴԱՐՋ» ԽՈՐԱԳԻՐՈՎ



ՅՅԴ Յայաստանի Գերագոյն մարմինին կազմակերպութեամբ երեկ երեկոյեան Երեւանի «Յարսնաբար» համալիրին մէջ տեղի ունեցաւ «Վերադարձ» խորագիրով ձեռնարկը, որ նուիրուած էր Արցախի Յանրապետութեան հռչակման 33-ամեակին: Ձեռնարկը նպատակ ունէր ստեղծուած ծանրագոյն իրավիճակին մէջ արժեւորել պատմական օրուան խորհուրդը, նաեւ ներկայացնել ժօտեցումներ եւ առաջարկներ՝ Արցախի հիմնախնդրի մարտահրաւերներու եւ քաղաքական լուծումներու, համազգային յանձնառութիւններու եւ արցախահայութեան անօտարելի իրաւունքների իրականացման վերաբերեալ:

Ձեռնարկին հրաւիրուած էին Յա-

յաստանի Յանրապետութեան պետական-քաղաքական գործիչներ, հոգեւոր եւ հանրային տարբեր շրջանակներու ներկայացուցիչներ: Ձեռնարկին յատուկ պատգամ յղեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս: Բացումը կատարուեցաւ Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս Եպս. Աբրահամեանի աղօթքով եւ պատգամով: Այնուհետեւ խօսք առին ՅՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, ՅՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Արա Պուլուգեան եւ ՅՅԴ Յայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան:

Ձեռնարկին մանրամասնութիւններուն կ'անդրադառնանք հետագային:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 33-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



1991 թուականի սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամաւորների ԼՂԻՄ մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունուեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան հռչակման մասին պատմական որոշումը: Նոյն թուականի դեկտեմբերի 10-ին կայացած համաժողովրդական հանրաքուէի արդիւնքներով եւ 1992 թուականի յունուարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Յանրապետութեան պետական անկախութեան մասին» հռչակագրով կազմաւորուեց հայկական երկրորդ

հանրապետութիւնը: Շուրջ երեսուն տարիների ընթացքում, չնայած Ազրպէյճանի մշտական սպառնալիքներին, սահմանադրական ամուր հիմքերով եւ արդիւնաւետօրէն գործող պետական ու ժողովրդավարական հաստատութիւններով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Յանրապետութեան ժողովուրդը ապահովում էր հայկական երկրորդ հանրապետութեան զարգացումը՝ փորձելով դառնալ պետութիւնների համաշխարհային ընտանիքի մաս:

Շար.ը՝ էջ 8

ԼԱԻՐՈՎ. «ՌՈՒՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԶՐՊԷՅՃԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՕԴԷՆ ԿԱԽՈՒԱԾ ՄՆԱՅԱԾ ԵՆ»

Ռուսիա-Յայաստան-Ազրպէյճան եռակողմ համաձայնութիւնները օղէն կախուած մնացած են: Այս մասին ըսած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով՝ նկատի ունենալով Ազրպէյճանի եւ Նախիջեւանի միջեւ փոխադրամիջոցային հաղորդակցութեան վերականգնումը:

Ան յիշեցուցած է, որ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի, Յայաստանի Յանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի ստորագրած 9

նոյեմբեր 2020-ի յայտարարութեան մէջ այդ կէտը կայ:

«Սկիզբը Յայաստանը հրաժարեցաւ ինքնաշարժային ճամբէն եւ պընդեց, որ միայն երկաթուղային ըլլայ: Յետոյ յանկարծ Յայաստանը յայտարարեց, որ Ռուսիոյ սահմանապահները պիտի չմասնակցին, թէեւ ատիկա սեւով սպիտակի վրայ գրուած է 9 նոյեմբերի յայտարարութեան մէջ», ըսած է ան:

Շար.ը՝ էջ 8

ԸՍՏ «ԺՈՒՄՅՈՒՆԻԱ»-Ի

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐ ՌԻԱՏԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐՑՈՎ ԼԸ ՏՐԻԱՆ-ԱԼՈՒԼԱ ՀԱՆԳԻՊՈՒՄ



Լաւատեղեակ աղբիւրներ «Ժուժուրիա» օրաթերթին յայտնած են. «Հինգշաբթի օր Սեուտական Արաբիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ տեղի պիտի ունենայ Ֆրանսայի նախագահի Լիբանանի հարցով պատուիրակ ժան Իվ Լը Տրիանի եւ սեուտական նախարարաց խորհուրդի քարտուղարութեան մէջ խորհրդակցական, լիբանանեան թղթածրարի պատասխանատու Նիզար Ալուլայի հանդիպումը՝ ներկայութեամբ Լիբանանի մէջ Սեուտական Արաբիոյ դեսպան Ռալֆ Պոլսարիի, որ վերջին շրջանին իր ունեցած քաղաքական եւ դիւանագիտական շարք մը հանդիպումներէն ետք շաբաթ օր մեկնեցաւ Սեուտական Արաբիոյ մայրաքաղաքը»:

Աղբիւրները նշած են. «Ռիատի մէջ հանդիպումը որոշուած է Փրանսական նախաձեռնութեամբ, որ անցեալ շաբթուան կիսուն փոխանցուած է Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Էրվէ Մակրոյի կողմէ՝ խօսելով Լիբանանի հանրապետութեան ընտրութեան նիստի գումարման համար ընթացող նախապատրաստութիւններուն ամնջուող յատուկ շարք մը գաղափարներու, եւ այդ թղթածրարը շրջանին իրադարձութիւններէն անջատելու մասին, որպէսզի Լիբանան իր սահմանադրական բոլոր կառոյցներով ներկայ ըլլայ, երբ ժամանակը գայ քաղաքական կարեւոր բազմաթիւ հարցերու քննարկման»:

Լաւատեղեակ աղբիւրները նշած են. «Լը Տրիան կ'ուզէ այս գաղափարները քննարկել լիբանանեան թղթածրարով զբաղող իր գործընկերներուն, մասնաւորաբար անոնց հետ, որոնք Լիբանանի հարցով արաբական-միջազգային ինքնակաշի մաս կը կազմեն, ինչպէս նաեւ կ'ուզէ Ռիատէն ետք այցելել Տրիան, եւ թերեւս աւելի ուշ ալ Գահիթէ, իսկ եթէ իր ուզածին նուազագոյն չափը աւարտէ, պիտի այցելէ Պէյրութ»:

ՔԱՐԱՄԷ. «ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՈՒԱՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔԸ ԶՆՁԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ՇԱՏ ԱՐԳԱՐԱՅԻ Է ԵՒ ՕՐԻՆԱԿԱՆ»



Արժանապատուութիւն հոսանքի նախագահ, երեսփոխան Ֆայսալ Զարամի գորակցեցաւ երեսփոխան Ատիպ Ապտէմասիիի խորհրդարանին եւ կառավարութեան ներկայացուցած 2024-ի օգոստոս ամսուան ելեկտրականութեան տուրքերը ջնջելու դիմումին, եթէ ամբողջ Լիբանանի մէջ ելեկտրականութեան մատակարարում չկայ:

«Այս առաջարկը շատ արդարացի առաջարկ է, շատ օրինական է, եւ լիբանանցի ժողովուրդին համար շատ արդար է», ըսաւ Զարամէ:

Ան յիշեցուց, որ ելեկտրականութեան բաժանորդագրութեան գինի բարձրացումն ու ֆրէշ տուարի վրայ գինի ճշդումը կապուած էր ելեկտրականութեան ընկերութեան ստանձնած մատակարարում օրական առնուազն 10 ժամի բարձրացնելու յանձնառութեան, եւ պարզ տրամաբանութեան համաձայն, որեւէ յանձնառութեամբ պայմանաւորեալ որոշում կը ջնջուի, եթէ այդ յանձնառութիւնը չկատարուի:

ԹՈՒՐԲԻԱՆ ՊՐԻՔՍ-ԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ամերիկեան պարբերականը կը նշէ, որ ՊՐԻՔՍ-ի նկատմամբ Թուրքիոյ հետաքրքրութիւնը պայմանաւորուած է նաեւ Եւրոպական Միութեան անդամակցելու հարցին մէջ յառաջընթացի բացակայութեամբ, ՕԹԱՆ-ի դաշնակիցներու հետ տարակարծութիւններով:

«Պլումպըրկ»-ի տուեալներով՝ կազմակերպութեան ընդարձակման հարցը կ'անկախուի քննարկել ՊՐԻՔՍ-ի յառաջիկայ վեհաժողովին, որ նախատեսուած է Զազանի մէջ, 22-24 հոկտեմբերին:

Անցեալ ամիս կազմակերպութեան միանալու պաշտօնական դիմում ներկայացուցած էր նաեւ Ազրայճան:

ՊՈՒ ՀԱՊԻՊ «ՍՈՒՐԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՍՈՒՐԻԱՅ ՄԷՋ ՎԱՂԱԺԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱՐԿՈՒՄՆ Է»

Լիբանանի արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Ապտալա Պու Յապիպ հանդիպում ունեցաւ Լիբանանի մէջ Յունաստանի դեսպան Տեսփիկա Քուրուլուփուլուի հետ եւ անոր հետ ընկերակցեց երկկողմանի ու շրջանային կարեւորագոյն հարցերը, առ ի պատրաստութիւն իր յոյն պաշտօնակիցին հետ սեպտեմբերի վերջաւորութեան ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ծիրին մէջ հանդիպումին:

Պու Յապիպ շեշտեց, որ պէտք է Կազայի մէջ անմիջական զինադադար հաստատել, եւ վերահաստատեց Լիբանանի՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի թիւ 1701 որոշումին կառչածութիւնը, ինչպէս նաեւ Կայն ամբողջովին գործարդելու եւ Իսրայէլի լիբանանեան բռնագրաւեալ մասցեալ հողերէն հեռանալու ու առկախ տազնապնէրը դիւանագիտական միջոցներով լուծելու կարեւորութիւնը:

Լիբանանեան դիւանագիտութեան պետը ըսաւ, որ պէտք է գորակցիլ եւրոպական ութեակին, որուն անդամութեամբ է:



րէն մէկը Յունաստանն է, միացեալ յայտարարութեան, ըստ որուն պէտք է վերատեսութեան ենթարկել Սուրիոյ նկատմամբ Եւրոպական Միութեան քաղաքականութիւնը՝ սուրիացի տազահանուածներու տազնապնէն լուծման ճամբան հարթելու համար:

Պու Յապիպ ըսաւ, որ շրջանին եւ մասնաւորաբար Լիբանանի մէջ սուրիացի տեղահանուածներու տազնապնէն լուծումը Սուրիոյ մէջ վաղաժամ վերականգնման ծրագրի գործի լծումով եւ մարդասիրական օժանդակութիւնները դարձեալ Սուրիոյ մէջ ուղղելն է, ինչ որ իրենց երկիրը վերադարձող սուրիացիներուն արժանապատիւ կենքի պայմաններ կ'ապահովէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ԱՐՈՂԱՏԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութիւնը հաղորդեց, որ երկու անձեր նահատակուած են, երբ Նաքուրա գիւ-

տարակարծիք կողմերուն միջեւ կապ ստեղծելու:

● ԱԶԳԱՅԻՆ ազատ հոսանք կուսակ-



ղին մէջ ինքնաշարժի մը վրայ խրալէեան յարձակում կատարուած է:

● ԶԸՇՊԱԼԼԱ յայտարարեց, որ Նաքուրայի վրայ յարձակումին հակադարձելով «Զաթիուշ» իրթիւններով իրթիւններու եւ Այն Եապլուպի, Ժեթի եւ Եհայամ բնակեցման վայրերը:

● ԼԱՄՏԵՐԵԱԿ աղբիւր մը ընտելեան «Ասպա» օրաթերթին յայտնած է. «Կան նախանշաններ, թէ Լիբանանի հարցով միջազգային ինքնակաշ մօտ օրէն պիտի շարժի՝ երկար ժամանակ առնելէն ետք մշակելու համար ծրագիր մը, որուն միջոցով կրնայ տազնապնէն մէջ բեկում մը յառաջացնել կամ

ցուբենէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին երեսփոխաններ Նատա Պուսթանին ու ժողով Աթալլան, ինչպէս նաեւ կուսակցութեան նախագահի քաղաքական հարցերով տեղակալ Մարթին Նամ Բիլին, այցելած է Տրիան, ուր հանդիպում ունեցած է մարտիկներու Ռայի պատրիարքին հետ:

Հանդիպումի ընթացքին քննարկուած են վերջին նորութիւնները՝ որոնց շարքին՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան կարգ մը երեսփոխաններուն հետ պատահածը:

Անոնք հանդիպումէն ետք Ռայի պատրիարքին ճաշի հիւրը եղած են:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Եկեք հերքենք համացանցի վրայ տարածուող բազմաթիւ կեղծ տեղե-

կութիւնները: Տեղեկութիւնը, թէ Միջազգային քրեական դատարանը Մոսկովիոյ նախագահին ուղղութեամբ Նամակին մէջ 3 սեպտեմբերին Ռուսիոյ ղեկավարի մեր երկիր կատարելիք այցելութեան վերաբերեալ յայտարարութիւններ ու կոչեր փոխանցած է, սուտ է ու փաստերու խեղաթիւրում եւ ոչ թէ պաշտօնական աղբիւրէ ստացուած տեղեկութիւն», նշած է պաշտօնաւորը:

Յիշեցնենք, որ Ռուսիոյ նախագահի մամուլը քարտուղար Տմիթրի Փեսքով յայտնած էր, որ Զրեմիլինը մտահոգութիւններ չունի, որ Ուկրաինայի ստորագրած է Հռոմի կանոնադրութիւնը եւ Միջազգային քրեական դատարանի անդամ է:

Ըստ անոր, Ռուսիան եւ Մոսկովիան «հիմնաւի երկխօսութիւն» ունին, եւ Փուլինի այցելութեան բոլոր երեւոյթները մանրամասն կերպով նախապատրաստուած են:

ԱՊՏԱԼԼԱ «ԵԹԷ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻՆ ՀԵՏ ՊԵՏՔ Է ԲԱՆԱԿՅԻԼ, ԱՊԱ ԲԱՆԱԿՅԻՆՔ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԵՐԿԻՐ ՎԵՐԱԿԱՐՁՆԵԼՈՒ ԵՒ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒՄԸ ԳԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»



Ժողովրդավարական հանդիպում երեսփոխանական պլոքի անդամ Պիլալ Ապտալա յայտնեց. «Պլոքին եւ Ընկերակց յառաջդիմական կուսակցութեան սուրիացի տեղահանուածներու թղթածրարին նկատմամբ մօտեցումը հիմնուած է այդ ամնջութեամբ մեր իրապարակած փաստաթուղթին վրայ, որ լիբանանեան ազգային շահին նկատմամբ նախանձախնդրութենէ կը բխի» ընդունելով այդ տեղահանուածներուն տնտեսական բեռ ու ժողովրդագրական ու այլ անկարգակներու վրայ խնդիրներ ստեղծելու եւ լիբանանցիներու մեծ հատուածին մօտ մղծաւանջ պատճառները:

Ապտալա «Շարք Առասաթ» օրաթերթին հետ գրոյցի ընթացքին յայտնեց, որ իրենց փաստաթուղթը նաեւ կը բխի այն նախանձախնդրութենէ, որ այդ թղթածրարին մէջ ցեղապաշտական մօտեցում չըլլայ, մինչ միջազգային ընտանիքը իր պատասխանատուութիւններէն նահանջ կը կատարէ, իսկ սուրիական վարչակարգը խանդավառ չէ տեղահանուածներու տունդարձով:

«Մեկնելով վերոնշեալներէն մեր մօտեցումը կը պահանջէ տեղահանուածներու տազնապնէն լուծման համար կապ հաստատել սուրիական վարչակարգին հետ, ինչպէս նաեւ խորհրդարանը կառավարութեան պարտականութիւն եւ ամբողջական լիազօրութիւններ տուաւ սուրիական վարչակարգին ու պետութեան հետ երկխօսութիւն կատարելու՝ քննարկելու համար ձեռն սուրիացի տեղահանուածները իրենց երկիր վերադարձնելու՝ անոնց անվտանգութիւնը պահպանելու եւ Լիբանանի բերք թեթեւցող ժամանակացոյցի մը ստեղծումով», նշեց երեսփոխանը:

«Ընկերակց յառաջդիմական կուսակցութեան նախկին ղեկավար Ռալֆ ժոմպաթ վերահաստատեց այդ հարցը, որպէսզի չըսուի, թէ տեղահանուածները իրենց երկիր չվերադարձնելուն պատճառը Սուրիոյ հետ կապի հաստատման մերժումն է, թէ մեր հաստատ համոզումը այն է, որ սուրիական վարչակարգը կը բանակցի նախ եւ առաջ ստանալու համար միջազգային օրինականութիւն, զոր տակաւին չէ ապահոված, ինչպէս նաեւ վերականգնման պատրուակով գումարներ կ'ուզէ:

«Ռուսի այն, ինչ որ այսօր կ'ընենք, հետեւեալն է. եթէ պէտք է բանակցիլ, ապա բանակցիք սուրիացիները տուն դարձնելու, պէտք եղած ցուցակները ապահովելու եւ սահմանային մաքսաներկութիւնը դադրեցնելու համար», ըսաւ Ապտալա:

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՎԵՐԱՄՈՒՏ 2024-2025

ՆԱՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետի օրհնութեամբ, կաթողիկոսարանի Հայագիտական կեդրոնը պիտի բոլորէ 12-րդ կրթական տարեշրջանը:

● Դասաւանդութիւնները պիտի կատարուին եռօրեայ դրութեամբ՝ երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, երեկոյեան ժամը 5:00-7:30, հորին Ա. Կեդրոնին մէջ, Ֆանաթ:

● Լիբանանէն ընդհալ բնակող ուսանողներուն առիթ պիտի ընձայուի առցանց հետեւելու դասընթացներուն:

● Նոր ուսանողներու արձանագրութիւնները կը սկսին երկուշաբթի, 26 օգոստոս 2024-ին, առաւօտեան ժամը 9:00-1:00 (բացի շաբաթ եւ կիրակի օրերէն):

● Ուսումը անվճար:

● Վերամուտ՝ երկուշաբթի, 7 հոկտեմբեր 2024, երեկոյեան ժամը 5:00-ին:

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԱՐՏՆԻ ԻՐԵՆՑ ՅԵՏ ՈՒՆԵԱԼ.

● 1 լուսանկար
● Անձնաթուղթի պատճեն
● Բ. Պաշտպանութեան կամ անոր համապատասխանող վկայականի պատճենը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել կաթողիկոսարան՝ 04-410001 թիւին:

ԿԹՈՂԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ

«ՊԷՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԾԵԾԵՆՔ, ՄԻՆՉԵՒ ՈՐ...»

Վերջերս Հայաստանի պատկերասփիւռի երկթուպեան ալիքներէ աւելի յաճախ կը հնչեն Երեւանի ներկայ իշխանութիւնը ի հարկին բիրտ ուժով «խելքի բերելու» առաջարկներ ու մեկնաբանութիւններ: Թէեւ նման առաջարկ բերողներէ ոմանք քիչ ետք կը խօսին նաեւ բիրտ ուժէ ետ կենալու ընտրանքին մասին՝ նկատի ունենալով, որ բռնութիւնը բիրտ հակադարձութիւն կրնայ ստեղծել, չարաշահուիլ այլ ուժերու կողմէ եւ երկիրը տանիլ ներքին բախումներու (շա՛տ ճիշդ տեսակէտ), սակայն նման մտածումներ կը կրկնուին, ըստ Էութեան՝ «Երբ չի մնում ելք ու ճար...»-ը մտաբերելով:

Քանի մը օր առաջ դարձեալ այս իմաստով առաջարկի մը ականջալուր եղայ, եւ յանկարծ յիշողութեանս մէջ ծագեցաւ աւելի քան 35 տարի առաջ, արցախեան շարժումի նախօրեակին պատահած դրուագ մը, որ առեւտրային ծիծաղաշարժ է, սակայն ունի այծժեականութեան գիծ մը:

...Եկո՛ւր, ընթերցո՛ղ, միասին երթանք դէպի ժողովարհ ու Անթիլիասի (Լիբանան) արեւելեան բլուրներու այն շրջանը, ուր տակաւին կային տարածուն ծառաստաններ, բնակարանային նոր թաղամասեր կառուցելու նախապատրաստութեամբ, բացուած էին նոր ճամբաներ, բայց շըրջանը բաւական կէս մը ամալի էր: Հոն երբեմն կիրակի կանուխ առաւօտուն տեղի կ'ունենային ՀԱՐԱՐԻ ԼԵՎԱՍԻ-ի (միջդպրոցական) մրցումներ՝ վազելի մը: Ամա՛ւ, միայն մրցումներուն ժամադրավայրը՝ Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտն էր:

Գարնանային օր մըն էր. որոշոր էի, հակառակ աշխատանքէս բխած սովորութեանս, կանուխ արթնալ, երթալ եւ ներկայ ըլլալ մրցումներուն, վայելել մանուկներու եւ պատանիներու արուոր մթնոլորտը: ՀԱՐԱՐԻ-ական բարեկամներս միշտ ալ պատմած էին, թէ հոն ներկայ ըլլալը անփոխարինելի վայելք մը կ'ընծայէ դիտողին, իսկ մրցողներուն...:

Հասայ մրցավայրը: Դաւարազարդ մարզագետիներ, կարտուած՝ նոր կարգապատուած «ժապաւեններով»: Դիտողին աչքերուն դիմաց կը պարզուէր ապրող, շարժուն գորգ մը. վառ կարմիր, կապուտ, կանաչ, դեղին ու նարնջագոյն շապիկաւորուած պատանի մարզիկներ խումբ-խումբ տարածուած էին մարզագետ-տիներուն վրայ, ճռուղելով ու բացազանութիւններով գիրայ կ'ողջուէին եւ այլ գոյնի հասակակիցներու մէջ նոր ընկերներ կը շահէին՝ սպասելով, որ մարզիչ-ուսուցիչները, հետեւելով իրենց ձեռքի ցուցակներուն, յայտարարէին, թէ այսինչ խումբին կարգն է մրցելու:

Քիչ մը հեռուէն, ճամբաներէն վեր կանգնած բլրակի մը վրայէն կը դիտէին գունագեղ ու միշտ ձեւ փոխող գորգը, որուն հենքը կանաչաւուն մարզագետիներէն էին: Կը մտածէի, թէ սա ինչպիսի՞ լուսնային պատրաստութիւն կը պահանջէ: Չէի անդրադարձած, որ մարզիչ-ուսուցիչներէն մէկը՝ կապուտաչուի, պէխաւոր եւ սրամիտ կատակներով ծանօթ Պօղոսը(*), ձախ կողմէն մօտեցեր էր եւ կանգնէր՝ քանի մը քայլ անդին, կը դիտեր տեսարանը ըմբռնչելով:

- Աղուոր տեսարան է, չէ՞, ընկեր Սարգիս,- ըսաւ՝ միտքիս ոտքերը գետին վերադարձնելով:

- Իսկապէ՛ս որ... Ինծի յաճախ ըսած էին, որ աչքովդ տեսնելը տարբեր բան է... Հիմա կը հասկնամ, թէ ինչ ըսել կ'ուզէին,- պատասխանեցի ժպտով:

- Գիտե՛ս, հոս հիմա քանի մը հարիւր աշակերտ կայ. ասոնք կը մըրցին, կ'ուրախանան, կ'ուրախացնեն, չչահողը քիչ մը կը տխրի, բայց մարզական կեանքը, ՀԱՐԱՐԻ-ը եւ անոր առաքելութեան հաւատացողները միշտ շահաւոր են,- բացատրեց՝ քիչ մը փիլիսոփայական ռնգով:

Քիչ մը զրուցեցինք: Պատմեց, թէ իբրեւ մարզական ուսուցիչ՝ ինչպիսի՞ արդուր գագցումներ կ'ունենայ, երբ առաւօտները դպրոցներու բակին մէջ կ'աշխատի դեռատի պատանի-

ներու ֆիզիքականը յղկել ու հոգին ազնուացնել (ինք լաւ հայ, լաւ մարմնամարզիկ եւ լողորդ է), կ'ուրախանայ, երբ աշակերտները կը հետեւին իր ցուցմունքներուն ու ասանկ մրցումներու լաւ արդիւնքներ ձեռք կը բերեն:

Ու յանկարծ խօսակցութեան ինքնաշարժին դէպը 90 աստիճան թեքելով՝ կէս-կատակ շարունակեց.



- Գիտե՛ս՝ ինչ կը մտածեմ, ընկեր Սարգիս: Կը մտածեմ, որ ամէն առտու, երբ մարզական պահուն աշակերտները բակին մէջ խմբուին, պետք է մտրակը քաշել եւ սկսիսք զիրենք լաւ մը ծեծել՝, ծեծել՝ ու ծեծել՝: Պիտի սկսին ցաւէն ճչալ, լալ, հարց տալ, թէ ինչո՞ւ ծեծ կ'ունեն: Պիտի չպատասխանենք, պիտի շարունակենք ծեծել: Նոյնը՝ յաջորդ օրը, երրորդ օրը... Միշտ պիտի պաղատին, որ ծեծը դադարեցնենք, գոնէ ըսենք, թէ ինչո՞ւ կը ծեծենք, ինչ յանցանք գործած են: Տեղի պիտի չտանք, միկնէ որ հասկնանք, թէ մեր ըսելիքը հասկնալու համար «հասունցած» են: Պիտի հարցնենք. «Կ'ուզէ՞ք, որ այլեւս ձեզ չծեծենք»: Ձեռք-ոտք պիտի համբուրեն եւ պիտի ասեն: «Ամա՛ւ, պարո՛ւ, օրիո՛րդ, ինչ որ կ'ուզես, կ'ընենք, միայն թէ այլեւս մի՛ ծեծեր մեզ»: Այն ատեն պիտի ըսենք. «Ձեր հայրենիքը ազատ-անկախ չէ, գագե՛ք, ազատագրեցէ՛ք, որպէսզի այլեւս ծեծ չուտէք»:

Գահ-գահիս պատասխանեց իր անուշ ժպտով ու պէխը շոյելով, լետոյ գնաց իր աշակերտներուն քով, եւ ալ երկար պահ մը դիտեցի մրցողները, եւ որովհետեւ կէսօրը կը մօտենար, Պօղոսին սրամտութիւնը մըտքիս մէկ անկիւնը նետած, գացի ի՛մ գործիս, վստահ ըլլալով, որ ազնուաւոր Պօղոսը իր մտածումը դուռնէ գործի վերածողը չէր, այլ կ'ուզէր պատկերաւոր բան մը հասկցնել:

Շուտով պայթեցաւ արցախեան շարժումը, յաջորդեց ազատամարտը, ազգովին կարգեցինք Հայաստանի վերանկախացման հանգրուանը, յաջորդ փուլին Արցախը գործնապէս վերամիացուցինք Հայաստանին... Վստահ եմ, որ Անթիլիասի բլուրներուն վրայ մրցող ԼԵՎԱՍԻ-ականները հասակ առին այդ մթնոլորտին մէջ, առանց ծեծ ուտելու տեսան անկախ Հայաստանը՝ Արցախով միասին, թերեւս ալ այս կամ այն ձեւով մասնակից եղան հայրենիքի կերտումին, հզօրացման:

Հիմա, ամէն անգամ, որ ականատես ու ականջալուր կ'ըլլամ Արցախի կորուստն ու Հայաստանէն զինուները «արդարացնելու» ԶԴԱ-պետին ու դաւարակիցներուն փորձերուն, միտքս կու գայ Պօղոսն ու իր «փիլիսոփայութիւնը»: Կը մտածեմ, որ Հայաստանը վաճառքի հանողները պետք է հաւաքել դպրոցի մը մարզադաշտին մէջ, մտրակը քաշել եւ անընդհատ ծեծել, միկնէ որ աղաչեն-պաղատին, որ մտրակահարումը դադրի, եւ իրենք պատրաստ են ընելու այն, ինչ որ պահանջուի իրենցմէ: Այլ խօսքով՝ «Կեցցէ՛ հեծանիւրը» քաղաքականութիւնը փոխարինել «մտրակի քաղաքականութեամբ»...

Պետք ունի՞մ ըսելու, թէ ինչ պահանջ պիտի դրուի անոնց:

Ս. ՄԱՅՐԱՊԵՏԵԱՆ

31 օգոստոս 2024

(*) Ականջդ խօսի՛, Պօղո՛ս:

ՀԱՆՂԻՊՈՒՄ ՄԸ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Հայաստանի Ա. Հանրապետութեան վարչապետ Սիմոն Վրացեանի «Կեանքի ուղիներով» յուշամատենագրական երկը իր կրկնակի իրատարակութիւններով ծանօթ է մեր յարգոյ հանրութեան: Լուսարձակի տակ պիտի առնեմ անոր մէջ տեղ գտած Հալէպի Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ զանգակատան բարերարին հետ հեղինակին հանդիպումներուն առնչուած տեղեկութիւնները, որոնք տեղադրուած են «Հանդիպումներ» բաժինի, ճորճ Ռոզբալլա Թահիան ենթադերնագիրին տակ:

Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ շրջափակի յարատեւ ներկային մասին հետաքրքրական տեղեկութիւններ դուրս բերելով պատմութեան էջերէն՝ մամուլի ճամբով հասանելի կ'ուզեմ դարձնել բոլորին, յատկապէս՝ մեր նորահասներուն, որպէսզի ճանչնան իրենց ծննդավայրի երախտաւորները: Յիշելով նաեւ, որ Հալէպի խորհրդանիշերէն մին դարձած Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ զանգակատան աշտարակը արդէն բոլորեց կառուցման աւարտի 95-րդ տարին:

Միկնէ ակնարկած հանդիպումիս մանրամասնութիւններու ներկայացումը, ժամանակին եւ վայրին հետ աղբրելու համար ընթերցողը, Ա. հատորէն քաղելով՝ Վրացեանի տողերով ամփոփ կը ներկայացնեմ, թէ Երբ եւ ինչ հանգամանքներու մէջ հանդիպած են անոնք:

Ս. Վրացեան գրած է. «1936-ին ճակատագիրը ինձ նետեց Հարաւային Ամերիկա: Ողջս կոխած երկիրը եղաւ Պրագիլ: Սան Փաուլոյի հայերը արքայական ընդունելութիւն ցոյց տուին ինձ 1936- ին: Եկել էին յատուկ գնացքով միկնէ Սանթոս Նաւահանգիստը՝ հոգաբարձութիւն, դպրոցի ուսուցիչներ, հայրենակցական միութիւններ, Հայ կարմիր խաչ, ընկերներ ու ընկերուիներ, համայնքի հովուի գլխաւորութեամբ, եռագոյն դրօշի հովանու ներքեւ: Առանձնապէս յուզիչ էր ընդունելութիւնը Սան Փաուլօ քաղաքում. կա-յարանում խռնուած էին մեծ բազմութիւն եւ դպրոցի աշակերտութիւնը՝ դրօշակներով եւ ծաղիկներով: Օտարները զարմանքով դիտում էին այս եռուզեղը, բայց ամենից աւելի եւս էի զարմացած. այսպիսի ցոյցերի եւ ո՛չ սպասում էի, ո՛չ էլ արժանի էի համարում ինձ: Սակայն շուտով գլխի ընկալ, որ իմ անձը առիթ էր միայն: Իմ տեղը ուրիշ այցելուի վերաբերմամբ էլ, հաւանաբար, նոյնը պատահէ: Հայրենիքից բազմա-հազար մղոններով հեռու, հայրենիքի կարօտը յորդացած սրտերում Սան Փաուլոյի հայրենակիցները հոգեկան պահանջ ունէին իրենց հայրենասիրական բուն զգացումներին ազատ ելք տալու: Ինձ մնում էր համակերպուել եւ պարկեշտօրէն կատարել ինձ վիճակուած դերը:

«Ցաջորդ առաւօտից սկսուեցին պաշտօնական այցելութիւնները՝ պատուիրակութիւնների եւ անհատների: Իրարողապետը մեծ մասամբ մեր պատուական ընկեր Ֆիու Միլիթարեանն էր՝ կեդրոնական դէմքը Սան Փաուլոյի հայութեան: Անհատ այցելութիւնները առանձնապէս իմ ուշադրութիւնը գրաւեց միջհասակ, ամուր կապմունքով, կենդանի աչքերով եւ լուրջ արտայայտութեամբ, եօթանասունի մօտեցող մի պարոն:

- Ճորճ Ռոզբալլա Թահիան,- ներկայացուց Ֆիուտը.- Սան Փաուլոյի հայ գաղութի ամենահին եւ յարգելի անդամներէն: «Ձեռքերի ջերմ սեղմում եւ... իմ գիտցած լեզուներից ոչ մէկը նա չէր իմանում, եւ էլ անձնաօթ էի նրա գիտցած փորձագայելներին, արաբերէնին ու թուրքերէնին: Ֆիուտը ստանձնեց թարգմանի պաշտօնը մեր միջեւ:

«Ինձ հետաքրքրեց այդ մարդը: Ֆիուտից եւ ուրիշներից ու վերջը նաեւ իրենից ստացայ տեղեկութիւններ:

«Ճորճ Ռոզբալլան 43 տարի էր, որ ապրում էր Պրագիլում, գաղթած էր Հալէպից: Պաշտօնապէս սա-տուցիի գաւակ էր, արաբախօս: Եկել էր՝ իբրեւ երկաթագործ համեստ արհեստավոր, աշխատել էր հայ յատուկ ջանասիրութեամբ եւ շահած դրամով աժան հողեր էր գնել Սան Փաուլոյի ծայրում:

«Տարիների ընթացքում քաղաքի ծայրը դարձել էր քաղաքի կեդրոն: Երկաթագործի փոքրիկ արհեստանոցն էլ դարձել էր մեքենայական մեծ գործարան:

«Այժմ Հալէպի համեստ արհեստաւորը այլեւս Սան Փաուլոյի հարուստ քաղաքացիներից մէկն էր: Ուներ մեծ գործարան, ուներ շքեղ ապարանք՝ հարուստների Փաուլիստանա պողոտայի վրայ եւ բազմաշահ ընտանիք: Որդիները շարունակում էին հօր գործը, կինը, հարսները, թոռները շէնացնում են աստուածային ամէն բարիքներով լեցուն տունը: Պատմում էին, որ միկնէ հայերի զանգուածային ներգաղթը Պրագիլ՝ ճորճ Ռոզբալլան աւելի արաբ էր զգում իրեն, յարաբերութիւն եւ պահում տիրիացիների հետ եւ նիւթապէս օգնում արաբական բարեսիրական ձեռնարկներին: Երբ 1923-ին տեղի է ունենում կիլիկեցի հայերի գաղթը դէպի Հարաւային Ամերիկա, նրա մէջ արթնանում է ազգային զգացումը: Նա լայն աշակցութիւն է ցոյց տալիս հասնող տարագիր-ներին, տրամադրում նրանց պատսպարան, օգնում է գործի ձեռնարկելու:

«Երբ երկրորդ անգամ Ֆիուի հետ այցելութեան եկաւ Ճորճ Ռոզբալլան, եւ արդէն բաւական ծանօթ էի նրա կեանքին եւ գործին: Պակասը լուրջեց իր յաջորդական տեսակցութիւնների միջոցին: Խնդրեցի պատմել իր անցեալի մասին: Կրկնեց այն, ինչ որ եւ արդէն գիտէի: Եւ պատմութեան ընթացքին յաճախ առանձին շեշտով արտասանում էր՝ սատուելի: Հպարտ էր, որ քաշ սատուցիներից էր: Իր յաջողութիւնը կենսքում բացատրում էր միայն մէկ բանով՝ աշխատասերով: Աշխատող ձեռքը չի մուրայ, իսկ հայը ի ծնէ աշխատասեր է: Աշխատանք եւ խնայողութիւն: Հայը ընդունակ է, նախաձեռնուր եւ խնայասեր: Այս էր իր կեանքի փիլիսոփայութիւնը:

«Այնուհետեւ յաճախ էր գալիս մօտս, եւ երկար զրուցում էիք մեծ մասամբ Հայաստանի եւ հայ ազգի ճակատագրի մասին: Փորձառութեամբ հարուստ



եւ հաճելի խօսակից էր եւ գիտէր իմաստալից ու սրամիտ պատմութիւններ անել:

«Մի անգամ եւ նրան հարց տուի. պարո՞ն Ռոզբալլա, եւ զարմանում եմ, ինչն է կապում ձեզ հայութեան հետ. դուք հայերէն չէք խօսում, Հայոց պատմութեան ծանօթ չէք, հայերէն «Հայր Մեր» անգամ չգիտեք, ինչո՞ւ էք ձեզ հայ համարում: Նա, յանկարծակիի եկած, մի պահ լուռ մնաց, ապա խնդրեց լաւ թարգմանել իր ըսելիքը եւ պատասխանեց. «Կար ու չկար մի ագռաւ կար: Աստուած նրան սպիտակ էր ստեղծել, բոլոր ագռաւները զարմանում էին նրա վրայ, որովհետեւ նա սպիտակ էր եւ լաւ երգչի էր համարում: Երբ միւս ագռաւները կանչում էին անձոռնի ձայնով դա՛ր, դա՛ր, սա աղանիկի պէս կուրծքը դուրս էր ցցում, աղանիկի նման ձայնում էր՝ վո՛ւ վո՛ւ, վո՛ւ»:

«Վերջը այս խելացի ագռաւը մտածեց, թէ ինչ ագռաւ չէ, այլ աղանիկ է: Արդէն գոյն ալ ապացոյց էր, թողեց իր ազգակիցներին եւ գնաց միացաւ աղանիկների երամիկ: Եւ ի՛նչ էք կարծում՝ ինչ պատահեց: Երբ մեր խելացին փորձեց աղանիկների հետ սիրաբանութիւն անել եւ վո՛ւ վո՛ւ երգել, բոլոր աղանիկները յարձակուեցին վրան, կտցահարեցին եւ փետուրները փետեցին. խեղճը մնաց մերկ եւ հագիւ ազատեց կեանքը: Ու երբ վերադարձաւ իր ցեղակից ագռաւներուն մօտ, սրանք էլ յարձակուեցին վրան, կըտցահարեցին եւ մնացած փետուրներն էլ փետեցին: Եւ թշուառականը մնաց մենակ՝ ո՛չ ագռաւ, ո՛չ աղանիկ:

«Միտք բանին պարզ էր: Աստուած նրան ագռաւ էր ստեղծել, ինչպէ՛ս կարող էր աղանիկ դառնալ: Ծիշ՞ո է՝ հայերէն չեմ խօսում, Հայոց պատմութիւն չգիտեմ, բայց հայի գաւակ հայ եմ՝ սատուելի: Հայ եմ ծնուել, հայ էլ հող պիտի մտնեմ: Կրցի՞ հասկցնել, սիրելի՛՜ բարեկամ: Հայը, նրա կարծիքով, օտարութեան մէջ եթէ լեզուն էլ, ամէն ինչն էլ կորցնի, բայց հաւատարիմ մնայ Գրիգոր Խաւատրոցի սուրբ հաւատքին, միշտ կը մնայ հայ: Ինքը հուսաւարիմ էր հայոց եկեղեցուն: Ապացոյց, որ Հալէպի եկեղեցու զանգակատան համար կարեւոր գումար էր նուիրել: Մեր սիրելի Ֆիուտը օգտուեց առիթից եւ ինձ դառնալով՝ ասաց.

- Պարոն Ռոզբալլան Սան Փաուլոյի մէջ ալ հայոց եկեղեցի մը պիտի շինէ:

«Ռոզբալլան չպատասխանեց, ինձ թուաց, թէ նրան հաճելի չէկաւ Ֆիուի խօսքը: Ժամանակը չէր հասած այդ փափուկ հարցով զբաղելու:

«Ուրիշ անգամ Ճորճ Ռոզբալլան ինք խօսք բացեց Սան Փաուլոյի եկեղեցու մասին:

- Ծիշ՞ո է եւ խոստացել էի շինել Սան Փաուլոյում, այս մարդիկ ուզում են, որ ամէն բան եւ անեմ եւ իրենք միայն վայելեն: Եթէ մարդ իր քոտիքից մի կաթիլ չլնէ գործին մէջ, այդ գործից բան դուրս չի գալ,- բացատրեց նա,- եւ ազգի համար ոչինչ չեմ խնայի: Եւ ասացի նրանց. եկեղեցի կը շինեմ, բայց դուք էլ պետք է մասնակցեք, որպէսզի շինուելիք եկեղեցու յարգը իմանաք: Եթէ չմասնակցեք, եկեղեցին պիտի լինի Ռոզբալլայի եկեղեցի: Սրանք ուզում են, որ եկեղեցին եւ շինեմ, բոլորովին իրենց յանձնեմ: Այդ պայմանով եւ եկեղեցի չեմ շինի:

«Մի ուրիշ առթիւ եւ գաղափար տուի բարեկա-

միս.

- Պարոն Ռոզբալլա, դուք կատարեցե՛ք ձեր խոստումը եւ շինեցե՛ք եկեղեցին: Սան Փաուլոյի գաղութն էլ թող եկեղեցու կողքին դպրոց շինէ: Դպրոցն էլ նոյնքան անհրաժեշտ է, որքան եկեղեցին:

- Լա՛ւ եւ ատում, բայց այս մարդիկ ազգի համար շէնք շինող չեն,- պատասխանեց նա: Սակայն ինձ թուաց, թէ կարծես մի բան շարժուել էր նրա հոգում:

Ա. հատորի վերեւ մեր յիշած ենթադերնագրին տակ Ս. Վրացեանի միկնէ Սան Փաուլոյէն մեկնումը Ռոզբալլայի եւ այլոց հետ ունեցած հանդիպումներուն եւ մնացեալ իրադարձութիւններուն ծանօթա-նալու վայելքը կը ձգեմ հատորը ընթերցել փափաքողներուն:

Փակելով «Կեանքի ուղիներով» երկի Ա. հատորը, մտովի կը վերադառնամ Հալէպ, ուր Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ արտաքին դարպասէն ներս մտնելով՝ սալայատակ, լայնակիստ սանդղակներով կամարակապ անցնել բաւ առաջնորդողի տեսադաշտին բացուող առաջին պատկերը կ'ըլլայ եկեղեցւոյ զանգակատան վեհ աշտարակը, որուն ընդե-լուզուած է բարերարի անդրիւն:

«Կառուցաւ զանգակատունս նուիրատուութեամբ բարերար ՏԻՄՈՒ ՌՇԶԵԱԼԼԱ ՃՈՐՃ ԹԱՅԱԼԵՄԻՆ. 1912» երկելեզու արձանագրութեամբ:

Չանգակատան աշտարակի շինարարական լուծումներն ու զարդաքանդակները այնպէս մը ներդաշնակուած են, որ աշտարակը բարերարի բարձրադիր անդրիի պատուանդանը ըլլայ կարծեք:

Պատմութեան կ'իմանանք, որ զանգակատան աշտարակը ամբողջացուած է կաթողիկէ գմբեթով, 1929-ին:

Պատմական իրադարձութիւններու եւ նշուած թուականներու համաձայն, կարելի է եզրակացնել, որ բարերար Ռոզբալլա Թահիան Սատուէն Հալէպ եկած ըլլալու էր 1893-էն առաջ եւ Պրագիլ տեղափոխուած՝ 1893-ին:


ԳՐԻԳՈՐ ՏՈՒՆԿԵԱՆ

Լաւալ, յուլիս 2024

ԵՐԳԸ

(ՆՈՒԻՐԻՈՒՄ Ե ՍԱՐԱԿ ՍԱՐԱԿԵԱՆԻՆ)

2020 թուականի մեծ ողբերգության նախօրին էր: «Անուշ» նստած էինք իրար հետ՝ ես, Շառոյեան Ռադիկը եւ Սահակ Սահականը: Սահակի ներկայութեամբ, բնականաբար, խօսակցութեան թեման երաժշտութիւնն էր: Խօսում էինք այն մասին, թէ ազգային-յեղափոխական երգը որքան դերակատար եղաւ եւ ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ արցախեան ազատամարտի, ազատամարտիկներին ոգու բարձրացման եւ հայրենասիրական դաստիարակութեան գործում: Սահակն ինձ ասաց, թէ՝ «Ա՛յ, ես թեմայով մի բան գրիր»: Մօտ երեք շաբաթ անց գրուած պատմուածքը ներկայացրի ընկերների դասին: Յետոյ տեղի ունեցան աներեւակայելի իրադարձութիւնները, եւ մենք մեզ մոռացանք, ուր է թէ ուրիշ բաների մասին յիշէինք: Սահակի հեռանալուց յետոյ յիշեցի այդ ամենը եւ որոշեցի պատմուածքը հրապարակել՝ նկատի ունենալով, որ երգչի նախատիպը Սահակն է եւ պատմուածքն էլ նուիրուել է սիրելի ընկերոջը:



կարող պարտուել, մեր պարտութիւնների լիմիտը սպառուել է: Կա՛մ մենք կը յաղթենք ու սա կը դառնայ մեր յաղթանակների սկիզբը, կա՛մ կը պարտուենք, ու պարտութիւնը կը դառնայ մեր վերջի սկիզբը: Խմում ենք յաղթանակի համար:

Տղերքը ոտքի կանգնեցին ու կնճռուտելով՝ կուլ տուեցին խաղողի թանձր օղին: Հրամանատարը միացաւ հացկերոյթին, որովհետեւ տղերքին անհանգստութեամբ վարակել էր կարելի. յաջորդ օրը տեղի էր ունենալու առաջին մարտը:

Սեղանի վրայ իշխում էր քչիւնցների, շարժուող դանակ-պատռառքաղի խուլ ժխորը: Այս ժխորից զատուեց տխուր-մեղորածոր երգը.

Ով կամաւոր է գրում, այն օրից հետոս է նա,
Իր ազգի ազնիւ կռում ամենամեծ յոյսն է նա,
Սիրայօժար, մահն աչքերին է գնում,
Առիծի պէս է կռում:
Չի երազում ո՛չ անուն, ո՛չ ոսկի, ո՛չ գանձ,
Հայրենիքն է իր հոգում սրբազան նախանձ,
Կռիւներ է մղում նա բոցերում անշէշ,
Մխարնները չի պատմում, պահում է իր մէջ:

- Երգի՛չ,- յուսահատ-թախանձագին կանչեց Հրամանատարը, առանց այն էլ իր կենացը մի բան չէր, հիմա էլ երգիչն էր ծանրացնում մթնոլորտը: Երգիչն ընդհատեց երգն ու լուռ հարցական նայում էր Հրամանատարին: Յետոյ նա դողացող ձեռքը երկարեց, վերցրեց օդու շիշը, լցրեց բաժակն ու մօտեցրեց այն շուրթերին, բայց, միտքը փոխելով, տն դրեց բաժակը, անձեռնոցիկով սրբեց բերանն ու բազուկներին ուժ տալով ոտքի կանգնեց.

- Բարի, գեղեցիկ, առաջինի ընկեր մարդուն, փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն...

Տղերքն աշխուժացան, ընկերների կենացը, մեր ընկերութեան կենացը, կանչեցին այս ու այն կողմից, նրանց միացաւ եւ Հրամանատարը: Ամիչքը քաշեցին գլխներին՝ բաժակներն աղմուկով զարկելով իրար: Տրամադրութիւնը մի քիչ փոխուեց, տղերքը բարձրաձայն կատակում էին: Հրամանատարը հերթով նայում էր նստածներին ու զարմանում. «Ես քսան օրում ոնց փոխուեցին տղերքը, անհոգ դեմքերին մտահոգութիւնը ակօսներ գծեց, լոջացան: Նորածիլ բեղ-մօրուքը, խախ մագփնջերին խառնուած ալիւրի նման փոշին խոհուն տեսք հաղորդեցին երկուայ արհեստաւորին, ուսանողին ու դպրոցականին. ճու՛տ, ճուտը որտե՛ղ է, ձայն տուեց հրամանատարը:

- Արջի թիկունքի տետում եմ, Հրամանատա՛ր, տնաշէնի թիկունքն էքան լայն է, որ կողքին նստած չեմ երեսում,- ասաց ճուտը, ափով շփիացրեց արջի թիկունքին ու ոտքի կանգնեց՝ պատանեկան չարածոյ ժպիտը երկնքի պէս ցինջ աչքերում: Հրամանատարի ասելիքը կատակից հեռու էր. եկեղեցին լրիւ մաքրուե՛ց, աղբը հեռացրի՛ք տարածքից:

- Ոնց որ հրամայել էս, ընկե՛ր Հրամանատար, մտնես եկեղեցի կը հիւսնաս՝ իւղ շաղ տաս՝ իւղ կը հաւաքես:

- Լաւ,- պահպանելով դէմքի լրջութիւնը արծազանգեց հրամանատարը, միաժամանակ ակնաչից չփիպեց Լուրգի քրթմնջոցը,- չեմ հասկանում կոտելո՛ւ ենք եկել, թե՛ բարեգործական աշխատանքների, մի շաբաթ է եկեղեցի ենք բարեկարգում:

Հրամանատարի ներսում կուտակուած տագնապներն ու մտահոգութիւնները կարծես միանգամից պրկուեցին ու վերածուեցին շիկացած գպականի:

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԲԱԶԵՆՆ
Շար.ը՝ էջ 6

«ՈՐՊԷՍԶԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՊԱՅԵՆԸ»

Հայուն պատմութիւնը տարածուած է քիչ մը ամէն տեղ: Այս տարածուած վիճակին մէջ հայը կերտած է մշակոյթ եւ քաղաքակրթութիւն: Այս ակնեղն է, երբ կը հանդիպիս հայկական իրականութիւններու, որոնք ունին երկար ժամանակներու վրայ տեւած պատմութիւն: Այս պատմութեան մէկ խօսուն իրականութիւնը Կրետի (Յունաստան) հայերն են:

Կրետէ, 21-26 օգոստոս 2024:

Կրետէ կղզին կը գտնուի Միջերկրական ծովուն արեւելեան կողմը եւ Եգեական ծովուն հարաւը: Հայերու ներկայութիւնը Կրետի մէջ աւելի քան հազար տարուան պատմութիւն ունի: 11-րդ դարէն սկսեալ արդէն հայեր ապրած են Հերակլիոնի մէջ: Այս փոքրաթիւ հայկական գաղութը չբաւարարուեցաւ միայն անձնական կեանքեր կառուցելով, այլ նաեւ տեսաւ հաւաքական կեանքի կարեւորութիւնը: Այս հաւաքական կեանքի այսօրուան մէկ լաւագոյն խօսուն եւ ապրող իրականութիւնը Ս. Յովհաննէս Կարապետ եկեղեցին է, որ հիմնուած է 1669 թուականին, եւ որ մինչեւ այսօր տակաւին կը վկայէ:



Եւ վկայութիւնը:

Եզնիկ արք. Պետրոսեան լծուած է տեղագին աշխատանքի՝ վերականգնելով պատկեր եւ վերաշինութեան եկեղեցին եւ համայնքը, երեւի մօտաւորապէս հազար հայորդիներով: Եթէ անոնց մեծ մասը կ'ապրի Հերակլիոն, բայց նաեւ տարածուած են կըղզիին այլ քաղաքներուն մէջ: «Գաղութին մէջ ունինք հայեր, որոնք հոս ծնած են, բայց կան նաեւ Հայաստանէն հաստատուած հայորդիներ», ըսաւ սրբազան հայրը: «Ինծի համար բոլորն ալ հայ են, եւ ես իրենց հայրն եմ: Երբեք թոյլ պիտի չտամ, որ տարբերութիւններ դրուին իրարու միջեւ», վստահեցուց սրբազանը:

Եզնիկ սրբազանին հետ գրուեցեցին գաղութի հայապահպանման գործընթացին մասին: Սրբազանը լաւատես է, ինչ որ ուժ եւ նոր տեսիլք կը սրսկէ գաղութի կազմակերպչական աշխատանքներուն մէջ: «Մեր ժողովուրդին զաւակները կը հաւատան, որ եթէ եկեղեցիին կողքին են, ուրեմն հայ են», ըսաւ ան:

Կրետի մէջ ազգային ուրիշ կառոյց կ'այլ բացի հայկական եկեղեցիէն: Տարիներ շարունակ Հայ եկեղեցիին ունեցած պատմական ներկայութիւնը եւ անոր անհրաժեշտութիւնը դարձեալ կը շեշտուի՝ այս




անգամ Կրետի մէջ: Հայ եկեղեցին հայուն հոգեւոր եւ ազգային ինքնութեան պահպանման կարեւոր հիմքն է: Իսկ Կրետի համար միակն է:

Աննա Թանթուշեան ծնած է Լոռի, Հայաստան: 1998 թուականին եկած է Կրետէ: Աննան ունի երկու զաւակներ: Եթէ 26 տարի է ի վեր ան ձգած է իր հայրենի տունը, բայց իր սրտին մէջ ամուր կը սեղմէ Հայաստանի կարօտը: «Պանդխտութեան ճանապարհով եկայ Կրետէ,- ըսաւ Աննա: - Հայրենիքի մէջ ստեղծուած դժուար օրերու պայմանները ստիպեցին, որ ձգեմ իմ տունն եւ հողս»:

Աննայի համար կան երեք սրբութիւններ՝ հաւատքը, լեզուն եւ հայրենասիրութիւնը: «Անհրաժեշտ է, որ արմատները պահենք», ըսաւ Աննա: Ան իր գաւազանները հայ մեծցուցած է եւ շաբաթ օրերը իր տան մէջ հայ մանուկներուն համար կը կազմակերպէ հայերէնի դասընթաց՝ անվճար: Աննան կը հաւատայ, որ «արմատները պետք է պահել»: Ան հաւատքէն անցած է գործնական աշխատանքի եւ կ'ուզէ, որ հայ մանուկները Կրետի մէջ նոյնպէս պահեն իրենց արմատները:

Ժիրայր Պալլազեան եկեղեցիին սարկաւազն է: Ան 97 տարեկան է: Ամէն կիրակի իր ամբողջ ուժով իր պարտականութիւնը կը կատարէ մեծ սիրով եւ նուիրածութեամբ: «Ինչ տարեկանին եկեղեցի մտայ եւ մինչեւ այսօր տակաւին հոս եմ: Հիմա 97 տարեկան եմ,- ըսաւ Ժիրայր: - Արմատներս հայկական են: Արմատները որքան որ ջրես, այդքան կը մեծանան»: Ժի-



րայրին դէմքին վրայ եթէ մէկ կողմէ կար ժպիտ, բայց կար նաեւ հաւատք, որ ինծի հետ բաժնեց այդ օր:

Սանդի Աւետիսեանը եկեղեցիին Թաղական խորհուրդի գանձապահն է: Աշխուժ ներկայութիւն է գաղութին մէջ: Սանդիի հօրենական մեծ ծնողքը եկած են Չմիւռնիայէն՝ Յեղասպանութենէն առաջ: Անոնք հիմնած են իրենց սեփական կօշիկի վաճառատունը՝ 1900 թուականին: Իրենց երկար տարիներու նուիրական աշխատանքին համար Աւետիսեանները պարգևատրուած են պետական մրցանակով:

«Մեծ հարստութիւն է հայ ըլլալը,- ըսաւ Սանդի: - Բայց նոյնքան պարտաւորութիւն է հայ ըլլալը, որովհետեւ կ'ապրինք Նստաստան եւ պետք է հաւասարակշռեց մեր յունական եւ հայկական իրականութիւնները»: Սանդիին ամուսինը յոյն է: Բայց իր տղայ զակին անունը դրած է Յովհաննէս: Այս Սանդիին

հարստութիւնն է, որ կը կիսէ հայուն եւ յոյնի հետ: «Հայրենիքը տունը եւ եկեղեցիին մէջ սորվեցայ,- ըսաւ Սանդի: - Եկեղեցին մեր տունը, դպրոցը եւ մեր ինքնութիւնն է: Երբ եկեղեցիին դռները բաց են, ժողովուրդը կը խանդավառուի»:

«Հայկական դպրոց չեմ գացած,- խօսողը Յովսէփ Պալլազեանն է, որ արդէն թեւակոխած է 90 տարիքը: - Հայրենի խօսիլ, գրել եւ կարողալ սորվեցայ եկեղեցիին միջոցով»: Յովսէփին դէմքին վրայ գծուեցաւ փոքր ժպիտ մը, որ կ'արտայայտէր իր գոհունակութիւնը Հայ եկեղեցիին նկատմամբ: Յովսէփ փաստաբան է մասնագիտութեամբ: Ան աւելի քան 40 տարի եղած է եկեղեցիին Թաղական խորհուրդին ատենապետը: «Երբեք տարեկան էի, երբ սկսայ եկեղեցի գալ եւ մով բռնել»:- Եթէ այսօր Յովսէփ մով չի բռնէր, բայց տակաւին հաստատ քայլերով կը յաճախէ եկեղեցի: Եթէ կը յաճախէ եկեղեցի, որովհետեւ, եւ ինչպէս որ ինք կ'ըսէ, «Հայրութիւնը կը սիրեմ եւ պատիւ կը զգամ, որ հայ եմ: Ես կ'ուզեմ օգնել իմ ժողովուրդիս»:

Թագուի Պազըրճեանը Հերակլիոն ծնած է: Ան ֆրանսերէնի ուսուցչուի է: Թագուիին լծուած է Կրետի հայ գաղութի արխիւներու ուսումնասիրութեան: «Թրքական արխիւներն ալ կ'ուսումնասիրեմ, քանի որ հայերու մասին շատ տեղեկութիւններ կան», ըսաւ Թագուիի:

ԴՈԿՏ. ԶԵՊԵՐ ԶԵՊԵՐԱՆ

Շար.ը՝ էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԻԵՐԸ, ՁԻԱԴՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ, ՀԵԾԵԼԱԶՕՐԸ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ - ԻԵ.

ՄԵՆՔ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԶՕՐ ՈՒ ՏՈԿՈՒՆ ԱԶԳԻ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐՆ ԵՆՔ
ԵՒ ԽԵՂԱԹԻՒՆՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ ԳԻՏԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ
ՈՒ ՓԱՌԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ

«Յնագետ»-ի մը զարմանալի եւ անտրամաբանական եզրակացութիւնը, որ նկատուելու համար հնագէտ ըլլալու կարիքն իսկ չկայ: Դոկտ. Զրիսթիւն Քիլկրոմ Kristina Killgrove, հնագէտ է, մասնագիտացած՝ վաղեմի մարդկային կմաբանութիւն եւ գիտական հաղորդակցութեան մէջ. Զիւսիսային Ժառոյխային Չեփըլ Զիլի համալսարանի պատմութեան ամպիւն-ներն... 6 յունիս 2024-ին՝ «Մարդը ձիւն չէ ընտելացուցած» մինչեւ 4200 տարի առաջ՝ հազարամեակ մը ուշ, քան կը կարծուէր», (Humans didn't domesticate horses until 4,200 years ago - a millennium later than thought) յօդուածը հրատարակած է «Լայվ Սայէնս» կայքէջին մէջ (1)...



Յօդուածին գործածած նկարներէն մէկը՝ Ներքին Մոսկովիա:



Արցախի ցեղասպանության պատճառով ամայի Ստեփանակերտի մեջ իրենց տները կորսնցուցած երկու ձիեր եւ շնիկ մը:

Նոյն համայնքարանի Նոյն ամպիոնէն Էր հազարապետ Ռոզան Զորսուիլը, որուն մասին՝ «Նախագահ Ուիլսընի «Ամերիկեան զինուորական առաքելութիւնը դէպի Յայաստան», կամ՝ «Հարպորտ առաքելութիւն»-ը, որուն տեղեկագիրը հիմքն է Սերի դաշնագրով ճշդուած Յայաստան-Թուրքիա սահմանին. խեղաթիւրուող փորձ մը եւս» յօդուածով անդրադարձած է (2): Արդեօք զուգահայտութիւն է քան ինչ թուրք դասախօսներով պատմութեան կաճառ ունեցող այս փոքր համայնքարանէն երկու աւարտողներուն հակահայ եւ պատմութիւնը խեղաթիւրող գործերը՝ հրատարակութիւնները:

Ընդհանրացնելով ամեն ինչ, ըստ Զիլկորովին, մարդը արարածը ձին ընտելացրեցին ե 4200 տարի առաջ միայն ե ոչ թե՛ 5200, այսինքն ԶԲ 2176-ին... «Շուրջ 500 ձիերու վաղեմի ծննդախնային քննութիւնը ցոյց կու տայ, որ մարդոյն գտնուեց ընտելացուցած են միայն ԶԲ 2200-ին՝ 1000 տարի աւելի ուշ, քան մեկն նախապէս կը կարծեիին», կ'ըսէ ան՝ առանց ասպացոյցելու... Այսպիսի կատարտում կատարողը պէտք է փաստէ, որ, նախ՝ ինչո՞ւ ե ինչպե՞ս 5200 տարի կը կարծուէր, ե փաստէ, որ այդ թուականը պնդողներուն քննութիւններն ու ասպացոյցները սխալ էին. սակայն՝ ո՞ր մէկ խօսք այդ մասին... Ինչ կրնայ խօսիլ միայն փրկարի մասին, ուր ինք քննութիւն կատարած է՝ Մտքին Մոնուիա...

Յանելեալ պրպտումները եղը, որ միշտ պետը Է կատարել, երեան եկաւ, որ ինը որտեղ քննութիւն չէ կատարած, այլ այս յորումը առած է «սխալ» կերպով մեկնաբանած է անգլիական «Նէյչըր» (Nature) գիտական հանդէս 6 յունիս 2024-ի համարէն, որուն բուն հեղինակներն են Փապլո Լիպրատո (Pablo Librado) Ե իր 25 աշխատակիցները: Իսկ կարելորը՝ բնագիրին խորագրով, աւելի տրամաբանական է, որ բոլորովին ուրիշ բան կ'ըսէ. «Եւրասիոյ մէջ ձիերու վրայ իմնուած լայնատարած շարժականութիւնը սկսաւ Ձմ շուրջ 2200-ին», (Widespread horse-based mobility arose around 2,200 BCE in Eurasia) (3)... Այստեղ կը յտակականայ Զիկրովիս Մեծ ՍեււՈԸ նաեւ, «Լայալ Սայէնսին» ա'լ աւելի մեծ սխալը, որ չէ ստուգած Զիկրովիսն աղբիւրն ու տեղ տուած է այս հազար տարուան եւ Եւրասիայէն դուրս, ձիերու պատմութեան մասին մեծ սխալին ու անտեսումին: Այնտեղ ոչ մէկ իտսը կայ ձիերու ընտելացման ընդհանուր պատմութեան, կամ ծագումնաբան մասին...

Յանելյալ պլպտում կատարելով՝ գտալ տասնեակներով լրատումաբոցներ, որոնք այս նոյն լուրը տուած են, սակայն բոլորը՝ վերիվարոյ ճշգրիտ եւ տրամաբանակալ: Անոսցմէ ստորեւ պիտի նշեմ երեք օրինակներ, որպէսզի տեսնեք, թէ սոյն գիտական լուրը Զիլկով ինչպէ՛ս խնդաթիւրած է.

Ա.- Աստրալիական «Քանաբերա Տեյլի» օրաթերթին խորագիրն է. «Արդի ծիուն հետքը կարելի է կապել 4200 տարի

առաջ ծագած «Երրուկդին՝ շառաւիղին», (Origin of modern horse traced to lineage 2400 years ago) (4). «Շուրջ 2400 տարի առաջ ձիերու որոշ տոհմ մը արագօրէն գրեթէխոր դարձաւ Եւրասիոյ մէջ, որ կ'ենթադրէ, թէ այդ ժամանակ մարդիկ սկսան ընտելացած ձիեր տարածել ամբողջ աշխարհի մէջ, ըստ «Նէյշըր» ամսագրի հինգշաբթի հրապարակած հետազոտութեալը...»:

Բ.- Ամերիկյան Վրոնհիպիի «Տէլի Սիուզ Ռեզորտ»-ը. «Պրոնականները յայտնաբերած են ժամանակակից ձիու ծագումը 4200 տարի առաջ սկսած սերունդէն» (Scientists have traced the origin of the modern horse to a lineage that emerged 4,200 years ago) (5): «Քիտականները գտած են ժամանակակից ձիու ծագումը, որ յառաջացած է 4200 տարի առաջ եւ արագօտէն ձեռնիտող ուղարձած՝ Եւրասիոյ մէջ...»:

9.- Ամերիկեան «Եւո Էս սիուզ»-ը ճիշդ Բ.-ին նման է (6). «Շուրջ 4200 տարի առաջ ձերտու յաւտուկ տոտմ մը արագազ-
րնէն գերիշխող դարձան Երսասիոյ մէջ, որ Կ'ենթադրուի, թէ այդ
ժամանակ մարդիկ սկսան ընտելացած ձիեր տարածել աշ-
խարհով մէկ, ըստ հինընթացքի «Նէյքըր» ամսագրի հրապար-
ակած հետազոտութեան...»:

Ցարդ 24 յօդուածներով «Հայաստանի ձիերը, ձիաւոր հերոսները, հեծելազօրը եւ յաղթանակները» յօդուածաշարքով եւ օգտուելով այնտեղ նշուած 214 հայ եւ օտար, իհն ու նոր աղբիւրներէ, պէղումներ եւ հետազօտութիւններ ու գանազան ուղղութիւններէ տուեալներով՝ փաստեր ներկայացուցած ենք, որ ձիուն ընտելացումը առաջին անգամ սկսած է Հայկական Լեռնաշխարհին մէջ շուրջ 7 հազար տարի առաջ: Այսինքն՝ Զիկրովի նշած 5000-էն նոյնիսկ 2000 տարի առելի՝ առաջ իսկ:

«Հայ պատմաբան Նիկողայոս Ադոնց կը նկարագրէ դամբարաններէ պեղուած պրոնզէ գօտիներ, որոնց վրայ փորագրուած է երկու ձիով կառքեր, որոնք, ըստ ֆրանսացի հնագետ ճարտարագէտ Մորկանի, ՔԱՅ-րդ հազարամեակին կը պատկանին (էջ 34-40) (7) (8): Այսինքն Հայաստանի մէջ 5000 տարի առաջ ոչ թէ մշակութային զարգացման ճիւղը:




Էջ 15-ին մէջ ՔԱ 1650-ի հայկական ձիու արձանիկ մը:

տելացուցած էին, այլ երկու ձիեր վարժեցուցած էին, որոնք միասնաբար կառքերի կը ըաշէին, եւ անոնք այս նկարը փոխադրած էին զօտիներու վրայ: Ստորին կը բացադառնուի, թէ ձիերու ընտելացման հովույնը կ'ընթադրէ, թէ ձիերու այս-պիսի ընտելացում-վարժեցումը անուուազն յաւելեալ հազար տարի առաջ սկսած պէտք է ուլայ:

«ՔԱ 4-ԷՆ 3-րդ հազարամյակի Յայաստանի ժայռապատկերներուն մէջ ձերտն ու ձիաքաջը կարգաբեր առաւտ են: Ինչեւ կենդանաբան Սոնա Մելչունեան կը «Նոստալի ծին Յայկական Լեռնաշխարհում» աշխատութեան մէջ կ'եզրակացնէ, որ ձիու ընտելացումը Յայկական Լեռնաշխարհին մէջ սկսած է ՔԱ 5-րդ հազարամեակին: Այսպէս, «Ինչեւ կենդանաբանութեան մէջ հաստատուած է այն միտքը, որ ընտանի կենդանիի մնացորդներու ի յայտ գալը որոշ ժամանակաշրջանի մը, կ'ենթադրէ, որ այդ ընտելացումի հոլովոյթը առնուազն հազար տարի աւելի առաջ սկսած էր:

«Այսպիսով, ԶԼ 4-րդ հազարամյակի սկիզբին ընտելացած է ձիուև յայտ գալը կ'արտոնե վառափորեն պնդել, որ մեր հազարամյակ առաջ, այսինքն՝ ԶԼ 5-րդ հազարամյակին, Հայաստանի տարածքին արդեն սկիզբ առած էր ձիու ընտելացման հողովորթը»։ Հայաստանի ԶԼ 7-6-րդ հազարամյակի հնուրձինները սակայնաթիւ են, սակայն բոլորը կը պարունակեն ձիու մնացորդներ, որոնք, միջին հաշուով, կը

Կազմվեն 3 տոկոս, իսկ ԶԱ 5-4-րդ հազարամեակին՝ 7-9 տոկոս, իսկ 3-րդ հազարամեակին արդեն կան ձիու դամբարաններ՝ 100 տոկոս կմախք»։ Այսինքն Զիլկրովի նշած 5000 տարի առաջ՝ Հայաստանի մեջ արդեն ընտելացած ձիու դամբարաններ լալտառեղուծած են։



ԶԱ 3-րդ հազարամյակի ժայռապատկերներ, 1.- սանձով ձի, Գեղամայ լեռներ 2.- Հեծեալ որսորդներ, Սիւնիք, 3.- Հեծ- ե- ալը՝ թամբով ձիու վրայ, Սիւնիք:

«Հասծիս վառ վկայությունն են ԶԱ 3-րդ հազարամեակին պատկանող Պեղամայ 1շեներու ժայռափոր սանձնած ձուկ պատկերը, Միկնիկի հեծեալ որսորդները եւ հեծեալը՝ թամբած ձուկ վրայ: «Հասկանալի է, որ այս մակարդակով տիրապետել ձիւն ո՛չ հարկարմեակներու եւ ո՛չ ալ մէկ հազարամեակի արդիւնք են, եւ այս բոլորը տեղի ունեցած են շատ աւելի առաջ, քան՝ այդ իրողութեան արտացոլումը իր ժամանակի արուեստի ժայռապատկերներուն մէջ», կը գրէ Սոնա Մելունեան (9), (10), որուն այս աշխատութիւնը 21-25 մայիս 1990-ին Ուաշինկթընի Միջազգային 6-րդ հնախնայաւաքական խորհրդիորդի յատկացումած մարդ-անասուն յարաբերութեան ներկայացուած էր (The International Council for Archaeozoology (ICAZ) devoted to the study of human-animal relationships over time using archaeological evidence):

Պեղելի Տեյխս 2007-ի «Ձիերու զարգացման ժամանակացոյց» 208 էջ պատմական ընդհանուր աշխատութեան մէջ (11), (12), վերը՝ նկար 3, ուր թուականի շարքով՝ սկսելով ԶԸ 75 միլիոն տարեշրջանէն մինչեւ մեր օրերը, ձիերու ընտելացման հիմնական փուլերու թուականները նշած է։ Զայաստանի ձիերու ընտելացման վերաբերող հետեւեալ ամենահինն սկսեալ՝ ժամանակացոյցը թուած է անուղղակի կերպով երկրորդելով Մելլունեանիս։

«ԸԱ 3000 ժամանակաշրջանի Հայաստանի մէջ (հնդեւրոպական ժողովուրդներու հաւանական բնօրրաններէն մէկը) գտնուած ժայռագատիկները ցոյց կու տան ցարդ ամենա հին սկարները, ուր մարդիկ կը ջշէն ձիով բառող ռազմականօքեր, սայլեր եւ արօքներ (3000 BCE Petroglyphs found in Armenia (one of the possible sites for the Indo-European homeland) show the oldest pictures of men driving chariots, wagons, and plows, with horses doing the pulling.) Էջ 12: Ապա ԸԱ 2000-ին գերազանց վիճակի մէջ պահպանուած նախնական սայլեր գտնուած են Հայաստանի մէջ: Անոք ցարդ յայտնաբերուած ժայռաքիի ամենահին սայլերն են, (2000 BCE Primitive wagons dating from this time have been found in excellent condition in Armenia. These are the oldest known wagons in the world.) Էջ 13:

ՈՒՆԵ անձ, որ ձիրերու մասին պատմական հետազօտութիւն պիտի կատարէ, անպայման պիտի հանդիպի Պեւորթ Տէյլիփի այս աշխատասիրութեան, մանաւանդ՝ ձիւ մասին գրող Քիլլորովի նման հնագոյն մը, որ բոլորովին անտեսած է ձիրերու ընտելացման իսկական պատմութիւնը եւ ուրիշին աշխատութիւնը՝ սխալ ձեռով մեկնաբանած: Աշխարհը լեցուն է բոլորոր պատուոյ մեկուորը «պատմաբաններով», որոնք յառտի տարտուերով պատմութիւն կը կերծեն:

Իսկ երբ Հայկական Լեռնաշխարհի, Հայաստանի, Արցախի, Հայոց պատմության եւ քաղաքակրթության կամ մշակույթի մասին պետք է գրեն ու վկայեն, կ'ըսեն անմտաթ, ևր-տե knowon անյայտ ժողովուրդ մը... Կարելի է վստահ ըլլալ, որ արեւմտեան Ասիոյ, Կովկասի, Մերձաւոր Արեւելքի, կամ Միջին Արեւելքի եւ Նոյնիսկ Եգիպտոսի պատմութեան մասին երբ «անյայտ ժողովուրդ մը» կ'ըսուի, այդ հոմանիշն է հայ ժողովուրդին:

ՅԱՐՈՒԹ ՉԷՔԻՃԵԱՆ

12 jnlnhu 2024

haroutchekijian.wordpress.com

1. <https://r.smartbrief.com/resp/sdjCCTmEkpDCKfAaCigm4vBWcNcBKg?format=multipart>
2. <https://www.aztagdaily.com/archives/610183>
3. <https://www.nature.com/articles/s41586-024-07597-5>
4. <https://canberradaily.com.au/origin-of-modern-horse-traced-to-lineage-4200-years-ago/>
5. https://www.dnronline.com/associated_press/national/scientists-have-traced-the-origin-of-the-modern-horse-to-a-lineage-that-emerged-4/article_6350aa85-6937-578c-92db-87ec4d1b47a5.html
6. <https://www.usnews.com/news/world/articles/2024-06-06/scientists-have-traced-the-origin-of-the-modern-horse-to-a-lineage-that-emerged-4-200-years-ago>
7. «Պատմական ուսումնասիրություններ», Նիկողայոս Ադոնց, Ա. Ղուկասեան հրատարակություն, Փարիզ, 1948 (յետմահու լույս տեսած):
8. <https://www.aztagdaily.com/archives/557124>
9. <https://aztag32.rssing.com/channel/56539322/article8871.html>
10. <https://lousavor-avedis.org/?p=19195>
11. http://www.sino-platonic.org/complete/spp177_horses.html
12. SINO-PLATONIC PAPERS, Number 177, Timeline of the Development of the Horse, by Beverley Davis, Department of East Asian Languages and Civilizations, University of Pennsylvania, August, 2007:

ԵՐԳԸ

Շարունակուած 4-րդ էջէն

Նա ծառս եղաւ տեղից ու գոչեց. Լուր՛գ, եթէ կարծում ես թէ Էս պատերազմը ձեռքիդ խաղալիքով Էս յաղթելու, իմացիր, որ խորը մոլորութեան մէջ ես: Ես քեզ խնդրում եմ, չէ՛, պահանջում եմ, որ այսուիտեւ, պատերազմական ժամանակներին համապատասխան վերաբերմունք դրսեւորես բոլոր հրամանների նկատմամբ եւ շուրջդ սադրիչ մտքեր չտարածես: Հակառակ դէպքում՝ քաղաքի շորերդ կը հազնես ու հայդա որտեղից եկել ես:

Լուրզը դժգոհ սկսուեց, մի պահ շփոթմունք տիրեց սենեակում, միայն ժպիտն էր ժպտալով նա-յում շուրջբոլորը: Տեղին միջամտեց երգը.

Երգազ իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, յոյսդ մեծ,
Զարջարտու երկիր:
Ես մի բունն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր, Հայաստան:

Կեսից բոլորը միացան երգին, հրամանատարի աչքերը կայծկլտացին, դէմքի ամպերը սկսեցին ցրուել:

- Տղե՛րք, բա չխմե՛նք մի բաժակ,- երգիչը խորխտ ոտքի էր կանգնել, մեծ ափի մէջ, ականի պէս թափահարում էր օդու շիշը:

Յետոյ երգիչը բազուկը գցեց Արջի թիկունքին ու իր հետ տարաւ արաի կենտրոն: Մէկ մարդու պէս տղերքը շարունեցին կողք-կողքի, ամուր շըղ-թայ կազմեցին, անխոցելի բերդապարսպի նման, եւ երգի թնդիւնի հետ սենեակը լցուեց յատակին զարնուող ոտքերի դոփ-դոփիւնով, պարողների գոռում-գոչիւնով: Պարի հրամանատարը երգը դրօշի պէս առաջ պարզած երգիչն էր: Երգիչը ձգուել էր, թաւ գլուխը ետ գցել՝ կծկուած ուտերը բացել լայն, դարձել էր ճկուն, շարժումը հաստա-տուն, ոտքերն ամուր՝ ինչպէս նախկինում: Ոգեւո-րութեան լիցքերից սենեակը թնդում էր, երգի ու կանչերի ձայները դուրս էին թռչում բաւտող պատերի միջից եւ թեւածում էին դեպի լուսնի արծաթ շղարշով պատուած լեռնալանջերը: Գի-շերային միւս ձայները սկսուել էին: Հեռուից ականջ դնողին կարող էր թուալ, թէ կռիւն արդէն սկսուել է:

Երգիչը, քրտիւքը սրբելով, մօտեցաւ. Հրամա-նատարին. ընկե՛ր, ինձ գէնք կը տաս՝ առաւօտ-եան ես էլ եմ գալու:

- Եղբա՛յր, դու կազդուրուիր, առանց քեզ էլ մի բան կ'անե՛նք:

- Հիմա արդէն լաւ եմ, երգը մտաւ ոսկորներիս մէջ, միտքս զուլալուեց, երբ չեմ երգում, հիւանդա-նում եմ: Յետոյ, ասեմ քեզ, առանց երգի կռուելը ճիշդ չէ: Հրամանատարը ցցուած բեղի տակ թաքցը-րեց խորամանկ ժպիտը ու երգչի հետ մտաւ պարի շրջանի մէջ:

Արարատն առա՛ջ հայ գինուորը քաջ,
Վրեժ մեր սրտում՝ գնանք աննահանջ...

Արեան ընդվզումից ծայր առած ոգեւորութիւնը դուրս էր յորդում երգի ու պարի հետ, ինչպէս փրփը-րացող գինին՝ լիքը կարասից: Պատերը հարբել, շորորում էին թունդ երգից, յատակի փայտերը թմբկահարում էին տղերքի պարին համահունչ: Խոհարարը օդին բերեց, Արջը լիքը բաժակները բաժանում էր պարողներին: Հրամանատարը խանդավառութեան այդ պահին ընդհատեց ու-րախութիւնը եւ բոլորին հրաւիրեց սեղանի մօտ:

- Հիմա սթափուէք, լսէք՝ ի՛նչ եմ ասում: Ամէն ին-չից երեւում է, որ ես խմորը շատ ջուր է վերցնելու, պատերազմը երկար կը տեւի: Այդ պատճառով առաջին մարտից առաջ ես ձեզ հրամայում եմ՝ պիտի դիմանաւ, կը կռուեք խելքով, չլքէք մարտա-կան շարքերը:

Հրամանատարը հանդիսաւորութիւն հաղորդեց ձայնին, ինչպէս արած պիտի լինէր իր պաշտելի հերոսը, ձեռքը տարաւ բեղին. ո՛վ զարկուի՝ դա-ւաճան է:

Յետոյ նորից հանդարտուեց. որպէսզի ատե-լութեան թոյնը չկուրացնի ու չմթազնի ուղեղները, մարտի դաշտում կ'առաջնորդուէր ոչ թէ թշնամու նկատմամբ ատելութեամբ, այլ կը մտածէր բոլոր են մարդկանց մասին, ում սիրում էք, կը խորհէք, թէ ես յաղթանակը քանի սերնդի անկատար երա-զանքը պիտի իրականութիւն դարձնի: Կը մտածէր եւ հողուրքի մասին: Առաւօտ վաղ էնք վեր կենա-լու, արեւը դաշտ ու անտառին համբուրեց մարտը սկսելու ենք, դրա համար հիմա գնացէք քնեք, որ ուժներդ տեղը լինի, ու շատ խմելուց ձեռքներդ չողդայ: Բայց, մինչեւ գնալը, ամէն մէկս իր համար թող կրկնի երդումը. «Երդում եմ պատուովս եւ հայրենիքովս» ու միասին բարձրածայն արտասա-նենք. «Իսկ եթէ հարկ լինի, նաեւ կենացիս գնով...»:

(Շար. 1)

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Խաչատուրի - Ուղի բթմաստ:
- Բարի լուր - Հայ նահապետ:
- Պրկել - Յուցական դերանուն:
- Հոլովակերտ մասնիկ - Պատերազմի աստուած:
- Հոմանի - Պարզամիտ:
- Անձնական դերանուն - Մահիճի գլխակողմ:
- Գիշատիչ թռչուն մը:
- Զգիտնալ կամ անտեսել - Կոնաբեր ծածուստեսակ:
- Որակ - Լուրթ:
- Այբուբենն - Հայ դիցուհի - Ծափոնական օդանաւային ընկերութիւն մը:
- Առաջնորդ - Ժիպակ:

ՈՐՈՇԱԿՅԵԱՅ

- Կալտոզ եզ - Վանի հին անուններէն:
- Նմանապէս այլ բաներ - Զայնակից տառեր:
- Յոգնակերտ մասնիկ - Թթուածնատ:
- Դատարան - Ժամանակ:
- Ընձիւղ - Սանձի փոկ:
- Խաղաթուղթի մէկնոց - Ժամանակի միաւոր - Դափի յաջորդը:
- «Հոգեւոր սուր» կոչումս՝ հայ կաթողիկոս:
- Անիտանալ:
- Լոյս երկբեկող ապակի - Ջրասեր հաւազգի:
- Շողակ - Անարկայ - Ոգեկից ըմպելի:
- Լշանակութիւն - Կարծած:

Պատարասեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

1	3					6	
	5			4			
	4				9	3	2
	6			5			1
5				7			8
8		4				2	
					6	8	1
		9	2	3			

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գնացածը բաղկացած է իւրացանցիւրը 9 թատակուսի հաշտող 9 բաժինները (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրացանցիւր թատակուսի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրացանցիւր շարք, ուղղահայեաց իւրացանցիւր փունակ եւ 9 թատակուսիւր իւրացանցիւր բաժին ունենայ ձեւ 9 թուանշանները՝ իւրացանցիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց չճգրիտ թատակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱԽՈՐԳ ԺԱՄԱՆԻ ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒԽՈՒՄՆԵՐԸ

ԽԱՂԱՐԱՐ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1	Ե	Ո	Ղ	Ա	Ր	Ո	Ղ	Ա	Ր	
2	Ա	Ր	Պ	Ա	Ի	Ա	Ր	Ե	Կ	
3	Ա	Կ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
4	Ա	Գ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
5	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
6	Ա	Ր	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
7	Ա	Ր	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
8	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
9	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
10	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
11	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա

ՄԱՐԻՆԵՐ										
	3	7	5	9	8	1	2	6	4	
8	9	1	4	2	8	5	7	3		
4	2	6	7	5	3	1	9	8		
5	4	9	1	3	7	6	8	2		
7	3	2	6	9	8	4	1	5		
6	1	8	2	4	5	9	3	7		
9	6	4	3	7	2	8	5	1		
2	5	3	8	1	9	7	4	6		
1	8	7	5	6	4	3	2	9		

«ՈՐՊԷՍԶԻ...»

Շարունակուած 4-րդ էջէն

Թագուհին ալ կ'ապրի հայուն ցաւը՝ Յեղասպանութիւնը: Այս ցաւը Թագու-հին կը մղէ, որ աւելիով խօսի հայուն մշակութային եւ գրական ժառանգու-թեան մասին: «Կ'ուզեմ, որ յոյները աւելի ճանչնան հայուն մշակութային մեծ հարստութիւնը», ըսաւ Թագուհին:

Վիթալի Տէր Գրիգորեան կ'ապրի Կրետէ Խանիա քաղաքը, որ Հերակ-լիոնէն աւելի քան երկու ժամ հեռու է: Ան իր հինգ զաւակներով եկած էր Հե-րակլիոն՝ պատարագին ներկայ ըլլա-լու համար՝ Աստուածամօր Վերափոխ-ման տօնին: Վիթալիի մեծ ծնողը եղած են Արցախէն: Վիթալի ծնած է Գերմանիա, ուրկէ անցած է Ղազախս-տան եւ 2017-ին հասած է Կրետէ:

«Հպարտ հայ եմ, անկախ անկէ որ հայերէն չեմ գիտեր», ըսաւ Վիթալի: Վիթալին կ'ապրի հայուն Յեղասպա-նութիւնը եւ անոր ցաւը: Ան իր սրտին վրայ կը շալկէ նաեւ Արցախի ցաւը: Եւ ինչպէս չշալկէ Արցախի ցաւը, երբ իր արմատները հոնկէ են: Վերջապէս, ինչպէս որ ինք ըսաւ. «Ես հարիր առ հարիր հայ եմ»:

Աստուծա Պենարտիսը ծնած է Աթենք: Բայց իր կենացի սերը, որ պի-տի դառնար իր կողակիցը, զինք բե-րած է Հերակլիոն, եւ ան բնակութիւն հաստատած է այս գեղեցիկ քաղաքին մէջ: Աստուծոյ հայրը յոյն է, իսկ մայ-րը՝ հայ: Սօրենական մեծ ծնողը եկած են Զմիւռնիայէն եւ անցած են Յեղաս-պանութեան ահաւոր փորձառութեան մէջէն: Աստուծոյ կը պատմէ իր ընտա-նեկան պատմութիւնը, եւ ես կը տեսնէի իր դէմքի արտայայտութիւններէն, թէ որքա՛ն ցաւ շալկած է ան: Չուշացաւ Աստուծոյ պատմութեան խրախուսիչ մասը. «Ես մեծցայ մեծ մայրիկիս հետ, եւ ան ինձի սորվեցուց ըսել՝ «Հայ եմ

ես, հայ եմ ես, քաջ Վարդանի թոռն եմ ես»»:

Աստուծոյ այսօր կը կենայ իբրեւ «քաջ Վարդանի» հայը: Ան ամուսնա-ցած է հայուհիի մը հետ եւ ունի երկու զաւակ: Աստուծոյ այսօր ստանձնած է եկեղեցիին Թաղական խորհուրդի ատենապետութիւնը եւ ոչ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի վերաշխուժացնէ հայ-կական գաղութը:

Կրետէ նստած՝ կը դիտեմ, բայց նա-եւ կը մտածեմ: Սփիւռքի մէջ որքա՛ն պայքար կայ: Պայքար՝ «պահելու հա-մար արմատները»: Այս պայքարին մէջ կան զոհողութիւններ, ու տակաւին՝ ջանք եւ նուիրում: Նուիրում՝ մեր ինք-նութեան եւ արմատներուն: Նուիրում՝ մեր պատմութեան եւ անոր արժանա-հաւատութեան: Նուիրում՝ մեր եկեղե-ցիին եւ ազգային կառոյցներուն: Նուի-րում՝ հայրենիքին եւ անոր սատարու-մին:

Դարձեալ Աննան. «Յեղասպանու-թիւնը մեր պատմութիւնն է: Մոռնալը անկարելի է: Պիտի յիշենք մեր ցաւով լեցուն պատմութիւնը, որպէսզի աւելի ուժեղ ապրինք»:

Յովսէփն է նորէն. «Հայերը մեծ ժո-ղովորդ են, բայց Հայաստանը պզտիկ է: Պիտի պահենք հայութիւնը եւ Հա-յաստանը, որպէսզի հռոմէացիներուն վախճանը չունենանք: Հայութիւնը՝ մեր արմատները, պիտի պահենք»:

Մեր արմատները պիտի պահենք: Հայաստան, սփիւռք եւ ամէն տեղ: Ուր որ հայ կայ:

Աննային արմատները: Կրետէի, իմ եւ համայն հայութեան արմատները: Պիտի պահենք:

Նիկոսիա, 29 օգոստոս 2024

ՕՐԱՏԵՏՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 3

- 1898 - Խաթալիկի եւ Աւերակ Զաղաքի կռիւները՝ Առաքելի եւ Մուշեղի գլխաւորութեամբ:
- 1952 - Տնունդ բանաստեղծ Յակոբ Մովսէսի, Աշոցքի Սիգաւետ գիւղը:
- 1959 - Տնունդ Արցախեան ազատամարտի մասնակից Սերգէյ Աբրահաւ-եանի, Կուսապատի մէջ: Նահատակուեցաւ 1994-ին, Մարտակերտի Յակոբ Կամարի գիւղին մէջ:
- 1963 - Մահ աղբիւրագէտ, հնագէտ եւ բանասէր Լեւոն Մելքիսէթ-բէկի, Թիֆ-լիսի մէջ: Մնած էր 1890-ին, Թիֆլիս:
- 1970 - Տնունդ Արցախեան ազատամարտի մասնակից Ռաֆիկ Աւանեսեա-նի, Խնձրիստանի մէջ: Նահատակուցեաւ 1993-ին, Մաղաւուզի մէջ:
- 1972 - Մահ դերասանուհի Նինա Մանուչարեանի, Երեւանի մէջ: Մնած էր 1885-ին, Թիֆլիս:
- 1975 - Մահ գրականագէտ Էդուարդ Թովքեանի, Երեւանի մէջ: Մնած էր 1911-ին, Սուրմալուի Էժնիար գիւղը:
- 1984 - Հայ յեղափոխական բանակի ականուած ինքնաշարժ մը կը պայթի Պոլսոյ Թոփ Գաբու պալատին մօտակայ վայրի մը մէջ:
- 1992 - Նահատակութիւն Արցախեան ազատամարտի մասնակից Կարեն Առաքելեանի, Մարտակերտի շրջանի Ղազանցի գիւղին մէջ: Մնած էր 1964-ին, Ստեփանակերտ:
- 1993 - «Ազրպէյճանի հողային ամբողջականութեան պահպանման» նախա-ծեռութեամբ, Թուրքիա գօրք եւ հրասայլեր կը կեդրոնացնէ Հայաս-տանի հետ իր արեւելեան սահմանի երկայնքին:



ՆՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 ԷՆ 95 MHz

7.00- Զայլերգներ

7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս

7.15- Հանդարտ երգեր

7.30- «Բարեւ»

8.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

9.00- «Բարեւ»

10.00- Խանդավառ երգեր

10.30- **Հայկական աշխարհի լուրեր**

10.45- Սիրային երգեր

11.30- Արդի մշակութային ժողովրդա-յին երգեր

12.00- «Երկրի հիւրասրահ». հիւր՝ Զինկի Աղաջանեան

12.30- Խանդավառ երգեր

1.00- Ազգային-հայրենասիրական երգեր

1.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

2.00- «Յիշատակելիները» (Հրաչ Արզումանեան)

2.05- Երաժիշտական երգեր

3.00- «Զըլ եմ պիոյմու», հիւր՝ Սուրայյա Ասի (ուղիղ՝ դիմա-տետրով)

4.00- «Գրական անդաստան» (բա-

Նաստեղծ-գրականագէտ Հու-շիկ Տասնապետեան)

4.30- Օտար երգեր

5.00- **«Վանայ Ձայն»-ը երեկոյեան**

5.05- «Ունկնդրութեան վայելքը» (Գարմէն Աճեմեանի հետ)

5.30- Նոր երգեր

6.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

6.50- Խանդավառ երգեր

7.30- Չուգերգներ

8.00- Օրոտան երգիչ (Էլի Պերպեր-եան)

8.30 - Radio Jazz

9.30- **Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)**

9.45- Էսդրատային երգեր

10.00- «Չարթօնք» (ընթերցումներ)

10.30- Հանդարտ երգեր

12.00- «Յիշատակելիները» / Յեղա-փոխական երգեր

2.00- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ

3.00- **Կրկնութիւններ**

4.30- Հայերէն այլազան երգեր

6.00- Հանդարտ երաժշտութիւն

Ձեր մայրն ընկերակիցը

Radio Voice of Van:Live

DOWNLOAD





ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

- ԼԻԿԸՐՓՈՒԼ ՅԱՂԹԵՑ ԵՈՒՆԱՅԹԸՏԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ - ՊԱՐՍԵԼՈՂԱ ԿԸ ՍՈՒՐԱՅ

• Անգլիոյ «Փրեմիեր լիկ»-ի 3-րդ հանգրուանի մրցումներուն գծով, ժամանակին «գազաթի մրցում» կոչուած Ելոյթը «Կլարմփր սատանաներ»-ուն Մանչեսթըր Եունայթըտի եւ Լիվըրփուլի միջեւ, առաջինին «Օլտ Թրաֆորտ» դաշտին վրայ, վերջ գտաւ ի նպաստ «Կլարմփրներուն»՝ 3-0 արդիւնքով:

Լուիս Տիաս երկու կող նշանակեց՝ օգտուելով Մոհամետ Սալահի փոխանցումներէն, մինչ երկրորդ կիսախաղին Սալահ նշանակեց Լիվըրփուլի 3-րդ կողը, որ իր ալ այս տարեշրջանի 3-րդ կողն էր:

Բայց Սալահը չէ, որ կը գրաւէ կոլ-սքորըրներու պարագլուխի դիրքը՝ 3 հանգրուաններէ ետք, այլ Մանչեսթըր քաղաքի այլ խումբի մը՝ Սիթիի նորվեկիացի յառաջապահ Էրլինկ Յաւալստ 7 կոլեր կըրցած է նշանակել երեք մրցումներէ ետք:

Ան անցեալ շաբթթավերջին նման հեթ-թրիք մը իրագործեց (3 կոլ)՝ նշանակելով Ուեսթ Յամի դէմ երեք կոլերն ալ (3-1): Անգապելի Յաւալստ անցեալ շաբթթ Իփսուլիչի դէմ ալ հեթ-թրիք իրագործած էր (4-1):

Այս շաբթուան սպասուած մրցումը սակայն տեղի ունեցաւ Արսենալի «Էմիրեյթս» դաշտին վրայ, ուր Սիթիի եւ Լիվըրփուլի նման 2 յաջորդական մրցումներ յաղթած Արսենալ կը մրցեր այլ անյաղթ խումբի՝ Պրայթընի դէմ:

Արսենալ առաջին կիսախաղին շատ առիթներ կորսնցնելէ ետք կրցաւ կոլ մը նշանակել գերմանացի Զայ Յակերցի շնորհիւ, սակայն Տեքլըն Ռայսի վտարումէն ետք (49-րդ վայրկեանին) Արսենալ մրցումին դէկը կորսնցուց եւ անմիջապէս կոլ մը ստացաւ Ժոաօ Փետրոյի կողմէ: Մրցումին արդիւնքը մնաց անփոփոխ, հակառակ Պրայթընի տիրապետելուն, եւ խումբերը մէկական կէտերով հեռացան դաշտէն:

Ստորեւ՝ 3-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Արսենալ - Պրայթըն	1-1
Նորթիկլիփմ Ֆորեսթ - Վուլվզ	1-1
Լայսթըր - Ասթոն Վիլա	1-2
Իփսուիչ Թաուն - Ֆուլհամ	1-1
Էվըրթըն - Պորսմաութ	2-3
Պրենթֆորտ - Սաութհեմփթըն	3-1
Ուեսթ Յամ - Մանչեսթըր Սիթի	1-3
Իլքեսթըր - Թոթենհամ	2-1
Չելսի - Քրիսթըլ Փելէս	1-1
Մանչեսթըր Եունայթըտ - Լիվըրփուլ	0-3

• Սպանիոյ 4-րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնա իր յաղթանակ երօք շարունակեց եւ յաջորդական 4-րդ յաղթանակը արծանագրեց Ռեալ Վալադոլիտի դէմ՝ 7-0 արդիւնքով ջախջախիչ արդիւնքով:

Պրագիլցի Ռաֆինիա 3 կոլ նշանակեց, մինչ մնացեալ կոլերը նշանակեցին Ռոպերթ Լեվանտովսքի, Ժիլ Զոնստէ, Տանի Էլյօ եւ Ֆեռան Թոքեւ:

Պարսելոնա 4 կէտի առաւելութիւն ունի Ռեալ Մատրիտի վրայ, որ կրցաւ 2-0 արդիւնքով պարտութեան մատնել Ռեալ Պեթիսը: Զիլիան Էմպպիէ նշանակեց երկու կոլերը 67-րդ եւ 75-րդ վայրկեանին:

Յատկանշական էր 2-րդ կողը, երբ պրագիլցի Վիկտորա Ճունիոր, որ Ռեալի փենալթիները ինք կը հարուածէր, գնդակը յանձնեց ֆրանսացի իր խմբակիցին, որ Սանթիակօ Պենսապեո դաշտին վրայ տակաւին կոլ չէր նշանակած: Ան առիթ ունեցաւ, 2-րդ կոլ մըն ալ նշանակելու փենալթիով:

Էմպպիէ մրցումէն ետք յայտնեց, որ մեծ պատիւ էր կոլ նշանակել աշխարհի ամենէն լաւ ակումբին տարագով, իր բազմաժադար համակիրներուն եւ դաշտին մէջ:

Աթլետիքօ Մատրիտ գրաւեց 3-րդ դիրքը՝ 1-0 արդիւնքով դժուար յաղթանակ մը արծանագրելէ ետք Աթլետիք Պիլպատոյի դաշտին վրայ, շնորհիւ Անխել Զորեսի կոլին՝ 92-րդ վայրկեանին: Զորես 88-րդ վայրկեանին դաշտ ներկայացած էր՝ փոխարինելով խմբապետ Զոքէն:

Վիարեալ, որ երկրորդ դիրքը կը գրաւեր, դժուար մրցում մը ունեցաւ Վալենսիայի դաշտին վրայ, եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն կրցաւ ձեռք ձգել:

Պեւը Է ըսել, որ Վալենսիա 4 մրցումներէ ետք իր առաջին կէտը չափեցաւ՝ շատ ձախող տարեշրջան մը սկսելէ ետք:

Ստորեւ՝ 4-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Ռեալ Մատրիտ - Պեթիս	2-0
Խեթաֆէ - Ռեալ Սոսիետատ	0-0
Սելիա - Ժորոնա	0-2
Ալավէս - Լաս Փալմաս	2-0
Օսասունա - Սելթա Վիկօ	3-2
Վալենսիա - Վիրաթեալ	1-1
Լեդանես - Մայյորքա	0-1
Եսփանիոլ - Ռայօ Վալքեսնօ	2-1
Աթլետիք Պիլպասօ - Աթլետիքօ Մատրիտ	0-1
Պարսելոնա - Վալադոլիտ	7-0

• Գերմանիոյ «Պուստըպլիկա»-ի երկրորդ հանգրուանի մրցումներուն երեք խումբեր յաջողած են 2 յաջորդական յաղթանակներ արծանագրել:

Առաջին դիրքը կը գրաւէ Յայտընհայմ, որ 6 կոլ նշանակած է եւ կոլ չէ ստացած:

Յայտընհայմի 18 տարեկան միջնապահ Փոլ Վալտեր եղաւ «Պուստըպլիկա»-ի պատմութեան ամենէն երիտասարդ ֆութպոլիստը, որ փենալթիով կոլ կը նշանակէր:

Վալտեր Յայտընհայմի հետ 2 կոլ նշանակեց այս շաբթթավերջին, երբ իր խումբը 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Աուկպպուրկը: Վալտեր անցեալ շաբթթ ալ կոլ նշանակած էր, եւ ան պարզապէս Պայերն Միւնիխէն փոխ տրուած է մէկ եղանակի համար:

Պայերն Միւնիխի մարզիկ Վալտեր «Պուստըպլիկա»-ի ամենէն երիտասարդ ֆութպոլիստն է, որ

առաջին երկու հանգրուաններուն կոլեր նշանակած է:

Վալտերի հիմնական խումբը՝ Պայերն Միւնիխ, իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրայպուրկը:

Առաջին կողը նշանակեց անգլիացի Յերի Զէյն փենալթիով, իսկ երկրորդ կողը՝ Թոմաս Միլլըր:

Յերի Զէյն, որ տակաւին կոլ չէր նշանակած Ֆրայպուրկի դէմ, այժմ 17 տարբեր ակումբներու բերդին մէջ նշանակած է կոլեր: Միակ ֆութպոլիստը, որ մեծ թիւով խումբերու բերդին մէջ կոլ նշանակած է, Միրուսլաւ Զլոբէն է, որ 28 տարբեր գերմանական ակումբներու դէմ կրցած է նշանակել:

Միլլըր, որ անցեալ շաբթթ հաւասարած էր բերդապահ Սեփ Մայլըրի մրցանիշին, 59-րդ վայրկեանին դաշտ ներկայացաւ եւ կատարեց իր ասպարեզի



474-րդ «Պուստըպլիկա»-ի մրցումը (մրցանիշ) Պայերնի շապիկով, մինչ Պայերնի շապիկով իր 709-րդ մրցումը կատարեց բոլոր մրցաշաբթերուն գծով՝ հաւասարելով Մայլըրի մրցանիշին:

Ախյոյեան Պայեր Լեւերքուզըն շատ լաւ ձեւով սկսած էր իր մրցումը Լայփցիկի դէմ, եւ Ֆրիհոնկ ու Կրիմալտօ երկու կոլեր նշանակած էին մինչեւ 45-րդ վայրկեան:

Սլովենիացի Զեւըն Զամփլ 52-րդ վայրկեանին, երբ իրաւարարը տակաւին չէր սուլած առաջին կիսախաղի աւարտը, կրցաւ կոլ մը նշանակել ի նպաստ Լայփցիկի:

Բ. կիսախաղին, Լեւերքուզըն մեծ թիւով առիթներ ստեղծեց, սակայն Լայփցիկ 57-րդ վայրկեանին եւ 80-րդ վայրկեանին կրցաւ 2 կոլ նշանակել շնորհիւ պելճիքացի Լուիս Օփենտայի եւ պարտութեան մատնեց Պայեր Լեւերքուզըն 35 մրցումներ անյաղթ մնալէ ետք «Պուստըպլիկա»-ի մէջ:

Ստորեւ՝ 2-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Պայերն Միւնիխ - Ֆրայպուրկ	2-0
Յայտընհայմ - Աուկպպուրկ	4-0
Պայեր Լեւերքուզըն - Լայփցիկ	2-3
Շթուրպարթ - Մայնց	3-3
Այնթրախթ Ֆրանքֆորթ - Յոֆենհայմ	3-1
Վերտըր Պրենքն - Տորթոմուն	0-0
Պոխում - Մեռնշնկլատպախ	0-2
Յոլշթին Զիլ - Վոլֆսպուրկ	0-2
Ունիոն Պրեյլին - Չանքըթ Փաուլի	1-0

• Իտալիոյ «Սերի Ա.»-ի մրցումներուն 4 խումբ 7-ական կէտով կը գրաւէն առաջին 4 դիրքերը:

Ախյոյեան Ինթեր Միլան 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Աթալեսան՝ շնորհիւ Մարքուս Թիւրամի (2), Նիքոլօ Պարսելլայի եւ Ճիմսիթիի (սխալմամբ՝ իր բերդին մէջ) կոլերուն:

Թորինօ քաղաքի երկու խումբերը՝ Եուվերթուս եւ Է.Ֆ. Սէ. Թորինօ 7 կէտ ունին: Եուվէ իր դաշտին վրայ չկրցաւ կոլ նշանակել Ա. Էս. Ռոմայի դէմ մրցումին եւ ճերմակ հաւասարութեամբ աւարտեց զայն, մինչ Թորինօ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Վենեցիայի դաշտնէ: Սաուլ Զոքօ նշանակեց մրցումին միակ կոլը:

Ուտինթեզ պրագիլցի յառաջապահ Պրեների կոլին շնորհիւ կրցաւ յաղթել Զոմոյի:

Առաջին կիսախաղին տիրապետելէ ետք, Ա. Սէ. Միլան 1-0 արդիւնքով կը յաղթեր Լացիօ Ռոմայի դաշտին վրայ, սակայն Լացիօ երկրորդ կիսախաղին շատ լաւ կիսախաղ մը ունեցաւ եւ 2 յաջորդական կոլեր նշանակեց: 72-րդ վայրկեանին Ռաֆայէլ Լեաօ կրցաւ նշանակել Միլանի հաւասարութեան կոլը:

Միլանի 2-րդ կէտն էր այս՝ 3 մրցումներէ ետք:

Ստորեւ 3-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Եուվերթուս - Ա. Էս. Ռոմա	0-0
Ուտինթեզ - Զոմօ	1-0
Ֆիորենթինա - Մոնցա	2-2
Ճենովա - Վերոնա	0-2
Լացիօ - Ա. Սէ. Միլան	2-2
Նափոլի - Փարմա	2-1
Պոլոնիա - Էմփոլի	1-1
Լեչէ - Զալիարի	1-0
Ինթեր Միլան - Աթալեսան	4-0
Վենեցիա - Թորինօ	0-1

• Քրանսայի «Լիկ 1»-ի 3-րդ հանգրուանին արծանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

Լիլ - Փարիզ Սեն Ժերմեն	1-3
Անժէ - Նիս	1-4
Լը Յաւը - Օքսեռ	3-1
Ռենս - Ռենն	2-1
Մոնպըր - Լանս	1-1
Թուլուզ - Մարսել	1-3
Մոնփելիէ - Նանթ	1-3
Պրեսթ - Սենթ Էթիեն	4-0
Լիոն - Սթրազպուրկ	4-3

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՇԱՀԵՑԱԻ ԱՊՈՒ ՏԱՊԻԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Յայաստանի պասքետպոլի ազգային խումբը յաջողութեամբ աւարտեց իր մասնակցութիւնը Ապու Տապիի միջազգային մրցաշարքին:

Աւարտական մրցումին, Յայաստան պարտութեան մատնեց Արաբական Միացեալ Էմիրութիւնները 87-81 արդիւնքով եւ շահեցաւ մրցաշարքի տիտղոսը:

Յայաստան, որ փորձառական խումբով մեկնած էր Ապու Տապի, բաւական դժուար սկսելէ ետք մրցաշարքը, հետզհետէ բարելաւեց իր խաղը եւ կրցաւ շահիլ տիտղոսը:

Շարժայի դէմ 82-100 արդիւնքով պարտութիւն մը՝ բացման մրցումին, ապա պարտութիւն մը եւս Արաբական Միացեալ Էմիրութիւններու դէմ խըմբակներու մրցումին (107-92):

Զառորդ աւարտականին հասնելէ ետք, հայրենի մարզիկները 108-84 արդիւնքով յաղթանակ մը արծանագրեցին Ռահտի դէմ մրցումին, որմէ ետք Յայաստանի ազգային խումբը կրցաւ յաղթել Չաֆայի՝ 106-99 արդիւնքով, կիսաւարտականին:

Աւարտականին, ինչպէս նշեցինք, մրցակիցը Արաբական Միացեալ Էմիրութիւններու ազգային խումբն էր, եւ այս անգամ Յայաստան եղաւ յաղթականը:

Այս մրցումին լաւագոյն մարզիկ ընտրուեցաւ Արտեմ Թաւաքալեան: Յայաստանի խումբին մաս կազմեցին Կարեն Մելիքեան, Եուրա Մելիքեան,



Սամուէլ Գեորգեան, Տիգրան Մկրտումեան, Մարաթ Միքայէլեան, Ալպերթ Թադետոսեան, Արտեմ Թաւաքալեան, Արայիկ Գեորգեան, Տանիէլ Կիրակոսեան, Ալեքսի Զիծենոք եւ Սասուն Կերպոյեան:

Հաւաքականի մարզիչ Գեորգ Դազանչեան ըսաւ. «Մենք բազմաթիւ պատճառներով լաւ չսկսանք մրցաշարքը, բայց մրցումէ մրցում մենք մեզի բարելաւեցինք, եւ այդ ամենը ի վերջոյ տուաւ իր արդիւնքը: Կը գնահատեմ դրական արդիւնքը, եւ աւարտական մրցումը մեր լաւագոյն ելոյթն էր մրցաշարքին: Նախորդ մրցումներուն պաշտպանողական որոշ հարցեր կային, բայց աւարտականին տղաքը իրենց լաւագոյնը տուին: Եթէ այլ ձեւով խաղայինք, չէինք կրնար յաղթել: Մեր ուժը խմբային խաղարկութեան մէջ էր: Բոլոր մարզիկներն ալ իրենց ներդրումը ունեցան այս մրցաշարքին: Զեմ ուզեր ռեւէ մարզիկի անուն նշել, միայն ըսեմ, որ մեր նպատակին հասանք»:

ՆՇԱՆԱՌՈՒԹԻՒՆ

ԳՈՒ ԽԱՉԱՏՐԵԱՆ - ԳՈՀԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԶՈՅԳԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆ

Գոռ Խաչատրեան եւ Գոհար Յարութիւնեան վազող թիրախ խառն ձեւի մրցումներու ոսկի մետալը շահեցան Եւրոպայի ախոյեանութեան:

Փլզենի մէջ (Չէխիա) տեղի ունեցող Եւրոպայի նշանառութեան ախոյեանութեան մրցումներուն, Խաչատրեան-Յարութիւնեան զոյգը 378 կէտ հաւաքելով հաաած էր կիսաւարտական:

Կիսաւարտականին (7-5) եւ աւարտականին (6-4) յաղթանակներ տօնելէ ետք, հայրենի հրաձիգները, 5-րդ ոսկի մետալը ձեռք ձգեցին ախոյեանութեան այս մրցումներուն:



ՍՓԵՐՉԵԱՆԻ ԿՐԱՄՆՈՏԱՐԸ ՅԱՂԹԵՑ ԹԻՔՆԻԶԵԱՆԻ ԼՈՔՈՄՈԹԻԻՆ

Կիրակի օր, Ռուսիոյ ախոյեանութեան 7-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, մայրաքաղաք Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Լոքոմոթիւ Մոսկուա - Կրասնոտար մրցումը, որ իրար դէմ հանեց Յայաստանի ազգային խումբի միջնապահներ Նայեր Թիքնիզեանը (Լոքոմոթիւ) եւ Էտուարտ Սփերձեանը:

Թիքնիզեան լաւ ելոյթ չունեցաւ իր խումբին նման եւ կիսախաղին փոխափոխուեցաւ, մինչ Սփերձեան բաւական լաւ ելոյթ ունեցաւ դառնալով իր խումբի լաւագոյն մարզիկը եւ նշանակելով կոլ մըն ալ՝ **փենալթիով**:

Կրասնոտար 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Լոքոմոթիլը եւ գահնկեց ըրաւ զայն պարագլուխի դիրքէն:

Այս արդիւնքէն օգտուեցաւ Չենիթ Ս. Փերթսպուրկ, որ 3-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Փարի խումբին դաշտն եւ գրաւեց պարագլուխի դիրքը:

Կրասնոտար 2 կէտ ետ կը մնայ Չենիթէ (17 կէտ), աւելի լաւ կոլ-Էվըրէյն

ՓՈԿՈՆ ՅԱՂԹԵՑ ՄԵԾ ԱՐԴԻՒՆՔՈՎ ԵՒ ՊԻՉԱՔՉԵԱՆ 2 ԷՍԻՍԹ ԿԱՏԱՐԵՑ

Լեհաստանի ախոյեանութեան 7-րդ հանգրուանի մրցումներուն, Փոկոն հիւրընկալեց Սլասք Կրոքլալը եւ 5-3 արդիւնքով յաղթեց:

Յայաստանի ազգային խումբի ծայրի յառաջապահ Վահան Պիչաքեան Փոկոնի առաջին երկու կոլերուն փոխանցումները կատարեց եւ մեծ դեր ունեցաւ Փոկոնի յառաջխաղացքին մէջ:

Փոկոն, որ իր դաշտին վրայ ամբողջական կէտեր չափած է, կը գրաւէ 4-րդ



դիրքը՝ 3 կէտով ետ մնալով Լէխ Փոցնա խումբէն, որ կը գրաւէ պարագլուխի դիրքը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Արցախահայութեան համար այս ծանրագոյն ժամանակներում Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրապետութեան Ազգային ժողովը, առաջ-նորոգւելով ժողովրդի կողմից իրեն վստահուած լիազօրութեամբ եւ նրա ապագայի նկատմամբ պատասխանատուութեամբ, արծանագրում Է.

● Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրապե-տութեան ժողովուրդը իր ինքնորոշման իրաւունքն իրացրել Է միջազգային իրաւունքի բոլոր կանոն-ներին համապատասխան՝ որեւէ առնչութիւն չու-նենալով Ազրպէյճանական Զանրապետութեան տարածքային ամբողջականութեան հետ:

● Զայաստանի Զանրապետութիւնը, որպէս Լեռ-նային Ղարաբաղի Զակամարտութեան խաղաղ կարգաւորման բանակցութիւններում Արցախի ժողովրդին ներկայացնող կողմ, անտեսելով Զա-յաստանի Զանրապետութեան Անկախութեան Զըռ-չակագրից բխող պարտաւորութիւնները, շրջան-ցելով Արցախի Զանրապետութեան անվտանգու-թեան երաշխաւորի իր անվերապահ դերն ու խախտելով 1992 թուականի յուլիսի 8-ի Զայաս-տանի Զանրապետութեան Գերագոյն խորհրդի որոշումը, Արցախը ճանաչել Է Ազրպէյճանի կազ-մում:

● Ազրպէյճանական Զանրապետութիւնը, որ-պէս Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Զանրապե-տութեան ժողովրդի նկատմամբ ցեղասպանու-թիւն իրականացրած պետութիւն, խաղաղութեան մասին բարձրագոյ յայտարարութիւններով մոլո-րեցնելով միջազգային հանրութեանը, այսօր էլ որ-դէգրել Է հայկական հետքը Արցախից վերացնելու՝ պատմամշակութային ժառանգութիւնը ոչնչացնե-լու քաղաքականութիւն, շարունակելով պատան-դի կարգավիճակով ապօրինաբար պահել գերինե-րի, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրապե-տութեան ռազմաքաղաքական ղեկավարութեա-նը:

● Ռուսաստանի Դաշնութիւնը, որպէս ռուսա-կան կայսրութեան եւ հօրհորդային Միութեան իրաւայաջորդ, հանդիսանալով 2020 թուականի

ԼԱԽՐՈՎ. «ՌՈՒՄԻԱ- ...»

Շարունակուած Ա. Էջէն

Լաւրով աւելցուցած Է, որ ըստ յայտարարու-թեան, Ռուսիան պէտք Է խորհրդատուական աջակցութիւն ցուցաբերեր հայ-ազրպէյճանական սահմանագիտման իռլովոյթին, սակայն Զայաս-տանը ատիկա չ’ուզեր։

«Սակայն միեւնոյն ժամանակ կը ձգտի այդ հո-լովոյթին մէջ ներգրաւել Արեւմուտքը» Միացեալ Նահանգները, Եւրոպական Միութիւնը, Ֆրան-սան։ Ատիկա անոնց ընտրութիւնն Է, սակայն պէտք Է նախ եւ առաջ համաձայնիւ Ազրպէյճանի հետ։ Այլ տարբերակ չկայ», ըսած Է ան։

«Ահա եւ յիշատակեցի փոխադրամիջոցային կապերու վերսկսումը եւ նշեցի նաեւ եռակողմ յանձնախումբի մասին, որ կը զբաղէր այդ հարցով եւ անկկա արդէն գրեթէ ժողով չի գումարեր։ Երե-ւանը կը նկատէ, որ անիկա պէտք Է կատարուի ուղղակիօրէն Ազրպէյճանի հետ, սակայն եթէ ատիկա յաջողի, ապա ի սեր Աստուծոյ», յայտա-րարած Է Լաւրով՝ Մոսկուայի միջազգային յարա-բերութիւններու պետական հիմնարկին մէջ իր արտասանած խօսքին մէջ։

ՊԱՅՐԱՄՈՎ. «ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆ ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Ասիկա ամէնէն լուրջ սպառնալիքն Է խաղաղ հոլովոյթին համար։ 2024 թուականի համեմատ Զայաստանի զինուորական պիւտճէն աւելցուած Է գրեթէ 50 առ հարիւրով։ Այս հոլովոյթը շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատ-ման համար խնջնդոտ Է», նշած Է ազրպէյճանա-կան դիւանագիտութեան պետը։

Պայրամով նշած Է, որ եթէ Զայաստանը շրջա-նին մէջ խաղաղութիւն կ’ուզէ, ապա պէտք Է լուրջ քայլերու ձեռնարկել։

«Փաստ Է, որ Զայաստանի Սահմանադրութեան մէջ տակաւին Ազրպէյճանի տարածքին նկատ-մամբ պահանջներ կան։ Ես ընդգծած եմ, որ ատի-կա խաղաղութեան եւ կարգաւորման հոլովոյթին սպառնացող լրջագոյն տարրն Է։ Եթէ Զայաստան շրջանին մէջ խաղաղութիւն կ’ուզէ, պէտք Է լուրջ քայլերու ձեռնարկել», աւելցուցած Է ան։

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարը յայտարարած Է, թէ Զայաստանի «սխալ քաղաքա-կանութիւնը կը խաթարէ խաղաղութեան հոլովոյ-թը»։

Ըստ անոր, «Եթէ Զայաստանը անկեղծօրէն շա-հագրգռուած Է խաղաղ հոլովոյթով, պէտք Է լրջօ-րէն քննարկէ ձեռնարկուած քայլերը»։

«Զայաստանը խաղաղութեան համաձայնագի-րի նախագիծէն վերցուցած Է քանի մը կարեւոր կէ-տեր», ըսած Է ան՝ աւելցնելով, որ Ազրպէյճանը եւս պիտի ներկայացնէ իր պատասխան առաջարկնե-րը։

Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան կողմ եւ երաշխաւոր, իր փաստացի ներկայութեան պայմաններում չի կանխել Ազրպէյճանի կողմից Արցախի ամբողջական հայաթափումը։

● ԵԱՀԿ Մինսքի խումբը՝ ի դէմս համանախա-գահ երկրներ Ռուսաստանի Դաշնութեան, Միաց-եալ Նահանգների եւ Ֆրանսայի՝ որպէս Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգա-ւորման միակ օրինական լիազօրութիւն ունեցող կառոյց, վճռական կեցուածք չորդէգրեց իր իսկ կողմից հռչակած սկզբունքների պահպանման գործում։ Ազրպէյճանն այդ ամէնը գնահատեց որ-պէս թուլութիւն եւ, արհամարհելով միջազգային հանրութեան կողմից ընդունուած ուժի չկիրառ-ման մօտեցումները, 2020 թուականի եւ 2023 թուականի պատերազմական գործողութիւնների եւ ցեղասպանական քաղաքականութեան միջո-ցով բռնազաւթեց միայնակ մնացած հայ ժողովըր-դի բազմադարեան բնօրրաններից մէկը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրապետութեան տա-րածքը։

Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրապե-տութեան ներկայացուցչական մարմինը, արտա-յայտելով Արցախի ժողովրդի կամքը, կոչ Է անում.

Զայաստանի Զանրապետութեան իշխանու-թիւններին՝

- Միջազգային ատեաններում օրակարգային դարձնել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Զանրա-պետութեան ժողովրդի՝ հայրենիք հաւաքական կերպով վերադառնալու իրաւունքի հարցը։

ԵԱՀԿ Մինսքի խմբի երկրներին՝

- Ազգերի ինքնորոշման, տարածքային ամբող-ջականութեան եւ ուժի չկիրառման սկզբունքների հիման վրայ շարունակել միջնորդական առաքե-լութիւնն Արցախի ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ ապրելու իրաւունքի իրացման նպատա-կով։

ՄԱԿ-ին, ՄԱԿ անդամ երկրներին՝

- Միջազգայնօրէն ստանձնած լիազօրութեան, պարտաւորութիւնների եւ միջնորդութիւնների շըր-ջանակում միջազգային հանրայայտ կանոնների եւ սկզբունքների, ինչպէս նաեւ Արցախի (Լեռնա-յին Ղարաբաղի) Զանրապետութեան հռչակման իրաւա-քաղաքական փաստերի հիմքով Արցախի ժողովրդի կողմից ընտրուած ներկայացուցիչների հետ գործակցութեամբ ապահովել Արցախի (Լեռ-նային Ղարաբաղի) Զանրապետութեան ժողովըր-դի՝ իրենց մշտական բնակութեան վայրեր վերա-դարձն ու այլ հաւասար եւ անկապտելի իրաւունք-ների իրացումը՝ որպէս ազատութեան, արդարու-թեան եւ համընդհանուր խաղաղութեան հիմք։

Մեր խոնարհումն եւք բերում ազատագրական պայքարի եւ պետականկերտման ճանապար-հին իրենց կեանքը նուիրաբերած հերոսներին։

ԵՐԵՆԱՆ
<i>2 սեպտեմբեր 2024</i>

ՀԱՃԻԵԻ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Յիքմէթ Զաճիււ յիշեցնելով, որ Իրաքի եւ Քուէյ-թի պատերազմէն ետք որոշակի սահմանափա-կումներ կիրարկուած են իրաքեան զինեալ ուժե-րու զարգացման առնչուած, ընդգծած Է. «Մենք կը գտնենք, որ նմանատիպ սահմանափակումներ պէտք Է կիրարկուին նաեւ Զայաստանի զինեալ ուժերուն նկատմամբ»։

Ան նաեւ նշած Է. «Շատոնց եկած Է Մինսքի խմբակը լուծարելու ժամանակը»։

«Այն, որ Զայաստանը օրակարգի վրայ կը պա-հէ այս կառոյցը եւ այս ուղղութեամբ ջանքերը կը շարունակէ, կը յուշէ, որ Երեւանը կը փորձէ իր արեւմտեան աջակիցներուն հետ միասին անա-ւարտ տազնապի տպաւորութիւն ստեղծել՝ փոր-ձելով իր ձեռքին մէջ պահել ազդեցութեան որոշա-կի միջոց», նշած Է Զաճիււ։

Անդրադառնալով Զայաստանի Զանրապետու-թեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի Զայաստա-նի եւ Ազրպէյճանի սահմանադրութիւններուն վե-րաբերեալ յայտարարութեան՝ Յիքմէթ Զաճիււ ըսած Է. «Զայաստանի Սահմանադրութեան մէջ տակաւին կայ կէտ մը, որ Ազրպէյճանի նկատ-մամբ տարածքային պահանջներ կը պարունակէ։ Այնքան ատեն որ չի փոխուած, մենք լուրջ խնդիր-ներ կը տեսնենք երկու պետութիւններուն միջեւ խաղաղութեան համաձայնագիրի ձեռքբերման հարցին մէջ։

«Ազրպէյճանի սահմանադրութիւնը որեւէ պե-տութեան նկատմամբ տարածքային պահանջներ չի պարունակեր, եւ ասիկա ազրպէյճանցի ժողո-վուրդի օրինական կամքը արտացոլացնող փաս-տաթուղթ Է։ Մենք այս համեմատութիւնը կը նկա-տենք բառախաղ։ Ուստի Զայաստանի վարչապե-տին եւ քաղաքական ղեկավարութեան խորհուրդ կու տանք ձեռնարկելու իրական խաղաղութեան օրակարգը խթանելու՝ շրջանի պետութիւններուն մասնակցութեամբ խաղաղ օրակարգին աջակցե-լու համար»։

ՄԻՆՉ ԻՍՐԱՅԷԼ ԳԵՐԻՆԵՐՈՒ ...

Շարունակուած Ա. Էջէն

Պաղեստինեան Զամաս շարժումը յայտարարեց, որ պատրաստ Է գոր-ծարք կնքելու, եթէ Իսրայէլի վարչա-պետ Պենիամին Նեթանիահուն ատի-կա կ’ուզէ։

Մինչ այդ, երէկ Իսրայելի մէջ գերի-ներու ընտանիքներուն զօրակցական եւ Նեթանիահուի կողմէ գերիներու վերադարձի գործարքի կնքման խո-չընդոտումը մերժող ընդհանուր գոր-ծադուլ մը, որ կը ներառէր դպրոցնե-րը, համալսարանները, Թել Աւիւի «Պեն Կորիոն» միջազգային օդակա-յանը, պետական հաղորդակցութիւն-ներն ու տնտեսական [այն ոլորտներ։

Իսրայելի մէջ Աշխատաւորական սեկտորներու համադաշնակցութիւ-նը երէկ յայտարարեց, որ կը սերտէ գործադուլը այսօրուան երկարածգե-լու եւ անելի մեծաթիւ մարգեր ներա-ռելով զայն ընդլայնելու կարելիութիւ-նը։

Իսրայէլեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Աշխատանքի դա-տարանը հրամայած Է կէսօրէ ետք ժամը 2:30-ին դադրեցնել Աշխատա-ւորական սեկտիքաներու համադաշ-նակցութեան գործադուլը։

Դատարանը ընդունած Է կառավա-րութեան դիմումը՝ նկատի ունենալով, որ գործադուլը քաղաքական Է եւ ոչ թէ աշխատանքային հարցերով։ Իս-րայէլացի գերիներու հարազատները հակադարձեցին դատարանի որոշու-մին՝ ընելով. «Զարցը գործադուլին չի վերաբերիր, այլ փոկութեանը առե-լանգեալներուն, զորս լքած Է Նեթա-նիահուն»։

Իսրայէլեան պատկերասփիւռի 12-րդ կայանը հաղորդեց, որ Իսրայելի վարչապետը յայտնած Է. «Իսրայելի մէջ գործադուլը Զամաս շարժումի քաղաքական գրասենեակի ղեկավար Եահիա Սընուարի աջակցութիւն Է»։

Իսրայէլեան պատկերասփիւռի 14-րդ կայանը իր կարգին հաղորդեց, որ Նեթանիահու ըսած Է. «Ֆիլատել-ֆիա միջանցքն հրաժարելու վերա-բերեալ մեր կեցուածքի փոփոխութիւ-նը Զամասին պարգեւ Է»։

«Առեւանգեալները վերադարձնել կ’ուզենք, սակայն գոյութիւն ունին վայրեր, որոնցմէ պէտք չէ հրաժա-րինք, եւ Ֆիլատելֆիայի միջանցքը Զամասի թթուածինի շիշն Է», յայտ-նած Է ան՝ աւելցնելով. «Եթէ Ֆիլա-տելֆիա միջանցքէն դուրս գանք, աշ-խարհը մեզի պիտի չարտօնէ այդտեղ վերադառնալ»։

«Կազայի մէջ մեր գերի զաւակնե-րուն սպանութեան ուժեղ հակադար-ձութիւն պիտի ըլլայ», յայտարարեց Նեթանիահու։

Զամաս շարժումի քաղաքական գրասենեակի անդամ, շարժումի աւազ բանագնաց Խալիլ Զայէ «Ժա-գիրա»-ի հետ հարցազրոյցի ընթաց-քին Կազայի մէջ իսրայէլացի գերինե-րու ճաղակտագիրին եւ բանակցու-թիւններու ընթացքին մասին Նոր մանրամասնութիւններ ներկայացուց։

Չայէ ըսաւ, որ Զամասը համաձայ-նութիւն կնքելու համար Կազայէն, ներառեալ Ֆիլատելֆիա եւ Նեցարիմ միջանցքներն ամբողջական հեռա-ցում կը պահանջէ՝ նշելով, որ Զամաս «մեծ ճկունութիւն եւ մեծ զիջումներ» կատարած Է համաձայնութեան հաս-նելու համար։

Ան ըսաւ, որ Իսրայելի հետ Կազա-յի մէջ պատերազմի դադրեցման ու գերիներու փոխանակման գործարքի շուրջ իսկական բանակցութիւններ չկան, եւ շարժումը պատրաստ Է ան-միջապէս համաձայնութիւն կնքելու, եթէ Իսրայելի վարչապետ Պենիամին Նեթանիահուն ատիկա կ’ուզէ։

Չայէ իսրայէլացի 6 գերիներու սպանութեան համար ամբողջական պատասխանատուն նկատեց Իսրայե-լը՝ նշելով, որ անոնք եւ ուրիշներ կրնային գործարքի ծիրին մէջ ողջ վի-ճակի մէջ իրենց ընտանիքներուն միանալ, «սակայն բռնագրաւումի բանակն ու անոր ծայրայեղական կա-ռավարութիւնն են պատճառը, որ իրենց կեանքերը կորսնցուցին, բռնագրաւումը զանոնք ուղղակի կեր-պով ձմբակոծելով իրենց հետ Նստող, անոնք հսկող եւ անոնց հետ ապրող-ներուն հետ սպաննեց»։

Ամերիկացի պաշտօնատարներ «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթին յայտնեցին, որ Ուաշինկթըն կը ծրագ-րէ Կազայի մէջ պատերազմի դադ-րեցման վերջնական համաձայնու-թեան առաջարկ ներկայացնել։

Ադրիւրներէն աւելցուցին, որ Ուա-շինկթըն վերջնական զինադադարի համաձայնութեան ուրուագիծին

շուրջ խորհրդակցած Է Տոհայի եւ Գահիրէի հետ, եւ երկու կողմերուն այդ վերջնական համաձայնութեան մերժումը կը նշանակէ ամերիկեան ղեկավարութեամբ բանակցութիւնե-րուն աւարտը։

Պաշտօնատարներ օրաթերթին նշեցին, որ Ուաշինկթընը, Գահիրէն ու Տոհան վերջնական առաջարկին վրայ կ’աշխատէին նախքան իսրայէլացի գերիներու դիակներու յայտնաբերու-մը։ Ամերիկացի պաշտօնատար մը շեշտեց, որ դիակներու յայտնաբերու-մը համաձայնութեան գոյացումը չի խանգարեր, այլ պէտք Է յաւելեալ մոդէ ուժ ըլլալ աւարտական այս փու-լին մէջ զայն կնքելու։

Ադրիւրները «Ուաշինկթըն Փոսթ»-ին յայտնած են, որ անցեալ շաբթուան բանակցութիւնները կեդ-րոնացած են իսրայէլացի գերիներու հետ փոխանակուելիք պաղեստինցի որոշակի կալանաւորուածներու վրայ, եւ առաջին փուլը պիտի ներառէր կի-րանկի օր դիակը յայտնաբերուած ամերիկացի-իսրայէլացի գերին, ինչ-պէս նաեւ կիներ, տարեցներ, հիւանդ-ներ եւ վիրաւորներ։

Պաշտօնատարներ մտավախու-թիւն յայտնեցին, որ ողջ մնացած գերիներուն թիւը կրնայ միայն տասնեակներով ըլլալ, եւ բանակցու-թիւնները այժմ 6 գերիներու մահէն ետք անելի դժուար պիտի ըլլան։

Սպիտակ տունը յայտարարեց, որ Միացեալ Նահանգներու Նախագահ Ծօ Պայտըն եւ փոխնախագահ Զա-մալա Զարիս Կազայի մէջ ամերիկա-ցի գերիի սպանութենէն ետք հանդի-պում պիտի ունենան Կազայի մէջ գի-նադադարի հաստատման եւ գերինե-րու փոխանակման գործարքի շուրջ բանակցութիւններուն մասնակից ամերիկեան պատուիրակութեան հետ։

«Պայտըն եւ Զարիս բանակցող պատուիրակութեան հետ պիտի քըն-նարկեն մղում կատարելը համաձայ-նութեան մը ուղղութեամբ, որ մնաց-եալ գերիներուն ազատ արձակումը կ’երաշխաւորէ»։

Պայտըն երէկ յայտարարեց. «Չեմ կարծեր, թէ Իսրայելի վարչապետ Պե-նիամին Նեթանիահուն գերիներու գործարքի կնքման համար բաւարար ջանք լը քափէ»։

Եգիպտոսի Նախագահի բանքեր Ահմետ Ֆահմի յայտարարեց, որ Մեու-տական Արաբիոյ գահաժառանգ Մո-համետ պըն Սալման իշխանը հեռա-ձայնած Է Եգիպտոսի Նախագահ Ապ-տել Ֆաթթահ Սիսիի։

Չրոյցի ընթացքին հաստատուած Է «Երկու եղբայրական պետութիւննե-րուն միջեւ պատմական եղբայրական յարաբերութիւններու ուժը»։ Չրոյցի ընթացքին նաեւ քննարկուած են շըր-ջանային կացութիւնը եւ շրջանային անվտանգութեան ու խաղաղութեան վրայ ազդող մարտահրաւերներու դի-մակայման համար արաբական միացեալ աշխատանքի ամրապնդ-ման կարելիութիւնները։

Զամաձայնութիւն գոյացած Է Կա-զայի մէջ անմիջական զինադադարի գոյացման, կյսրորդանանի մագլցու-մը դադրեցնելու կարեւորութեան շուրջ, ինչ որ կը նպաստէ տագնապի ծիրը չընդլայնելուն եւ կը վերականգ-նէ շրջանային կայունութիւնը։

Թուրքիոյ Նախագահական պալա-տի տեղեկատուական գրասենեանը իր կարգին յայտարարեց, որ Թուր-քիոյ Նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտո-ղան Մեուտական Արաբիոյ գահաժա-ռանգին հետ հեռաձայնային հաղոր-դակցութեան մը ընթացքին քննար-կած Է Պաղեստինի մէջ վերջին զար-գացումները եւ շարք մը շրջանային ու միջազգային թղթածրարներ։

Էրտողան շեշտած Է Իսրայելի վրայ ճնշումները բարձրացնելու կարեւո-րութիւնը՝ նշելով, որ պէտք Է դադրեցը-նել իսրայէլեան յարձակումներն ու Թել Աւիւի կողմէ մարդու իրաւունքնե-րու ոտնահարումները, եւ մալաուն գի-նադադար գոյացնել։ Ան նաեւ նշած Է իսլականական պետութիւններու միաց-եալ քայլերու կարեւորութիւնը։

Միւս կողմէ, իսրայէլեան «Իսրայել Զայոմ» օրաթերթը հաղորդեց, որ Իս-րայելի պ